

29



Ա. ՄԻԿՈՅԱՆ

ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԸ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ • 1936

Պրակտիկական բույսերի և կենդանիների, միջատների

Ա. ՄԻԿՈՅԱՆ

ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԸ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԶԵԿՈՒՑՈՒՄ

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ
1935 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ



ՀԿ(Բ) Կ ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

А. М И К О Я Н
ВОПРОСЫ ПИЩЕВОЙ ПРОМЫШЛЕННОСТИ
В СВЯЗИ СО СТАХАНОВСКИМ
ДВИЖЕНИЕМ

Армпартиздат, Ереван

ՍՏԵՂԾՎԱԾ Ե ՇՁՈՐ ՍՆՆԴԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ
ԻՆԴՈՒՍՏՐԻԱ

Ստախանովյան շարժումը, ինչպես ասաց
ընկեր Ստալինը — դա սոցիալիստական
մրցման նոր, բարձր ետապն է, դա մրցու-
թյուն է՝ նոր տեխնիկայի բազայի վրա,
նոր տեխնիկային տիրապետած մարդկանց
մրցություն: Ծանր արդյունաբերությունը
հեղափոխության տարիների ընթացքում
տեխնիկապես վերազինվեց ավելի, քան ար-
դյունաբերության մյուս ճյուղերը: Դրա
համար ել ստախանովյան շարժումն սկըս-
վեց ու առավել բուռն տեմպով աճում է
հենց ծանր արդյունաբերության մեջ:

Ընկեր Որջոնիկիձեն Կենտկոմի այս պլե-
նումում տված իր հիանալի զեկուցման մեջ
նկարագրեց այն պայծառ, գունեղ պատկե-
րը, թե ինչպես մեծ Լենինի մեծ պլան-
ները, վորոնք ղեկավարման տարիներին յե-
րազ եյին թվում, այժմ դարձել են
իրականություն: Այդ յերազներն իրագործ-
ված իրականություն են դարձել: Ընկեր
Ստալինի, Լենինի գործի այդ մեծ շարու-
նակողի զեկավարությամբ, դրանք իրակա-
նացել են և զգալիորեն մեծ չափով՝ գոր-
ծարանների, ելեկտրոկայանների, յերկա-
թուղիների մեր շինարարությամբ, սոցիա-
լիստական դյուկատնտեսության ու ար-
դյունաբերության զարգացմամբ:

Ընկեր Սերգո Որջոնիկիձեն լիակատար
հիմքով ու իրավամբ այստեղ ասաց, վոր
այնպիսի գործարաններ, ինչպիսիք Լան
մեր ծանր արդյունաբերության մեջ, հեշտ
չե գտնել Յեվրոպայում ու Ամերիկայում:
Կապիտալիզմի շատ յերկիրներ կարող են նա-
խանձել մեր ծանր արդյունաբերությանը:

Դժբախտաբար յես չեմ կարող նույնն ա-
սել մեր սննդարդյունաբերության մասին՝
ամբողջութեամբ վերցրած : Բայց, այնու-
մենայնիվ, սննդարդյունաբերության մեջ
ես վերջին տարիների ընթացքում ստեղծ-
ված են տասնյակ նոր հիանալի ձեռնարկ-
ություններ՝ կառուցված ամերիկյան ու
յեվրոպական տեխնիկայի վերջին խոսքով :
Դրանց մեջ կան այնպիսի ձեռնարկություն-
ներ, վորոնք համաշխարհային տեխնիկայի
լավագույնն են հանդիսանում :
Դրանց կողքին սննդարդյունաբերության
մեջ կան շատ մանր ձեռնարկություններ՝
ցածր տեխնիկայով : Դրանք փոխարինված
չեն նոր, խոշոր ձեռնարկություններով, վո-
րովհետեւ սննդարդյունաբերության տեխ-
նիկական վերազինման պրոցեսը դեռ ա-
վարտված չէ :

Սննդարդյունաբերության վերազինումը
տարբեր ճյուղերում տարբեր ուղիներով է
ընթացել :

Սննդարդյունաբերության ամբողջ ճյուղ-

ղեր մեզ մոտ նոր են առաջ յեկել, ստեղծ-
վել են դատարկ տեղում: Կոնսերվի ար-
դյունաբերությունն, որինակ, արդյունաբե-
րության միանգամայն նոր ճյուղ ե հանդի-
սանում: Մինչ հեղափոխությունը մեզ մոտ
կար ընդամենը կոնսերվի յերկու տասնյակ
մանր գործարան, վորոնք արտադրում էին
80 միլ. տուփ պահածո. այժմ միայն մեր
Խերսոնի՝ Ստալինի անվան գործարանը կա-
րող ե արդադրել 80 միլլիոն տուփ պահածո,
իսկ ընդամենը մենք ունենք 145 կոնսերվի
գործարան: Դրանք բոլորը, կամ թե հա-
մարյա բոլորը, սարքավորված են ամերի-
կյան տեխնիկայի վերջին խոսքով և թիթե-
ղի առկայության դեպքում կարող են հըս-
կայական քանակությամբ պահածոներ տալ
— մինչև մեկ միլիարդ յերկու հարյուր մի-
լիոն տուփ և ավելի:

Բաց ծովում կատարվող ձկնորսություն—
առաջ, նախահեղափոխական Ռուսաստա-
նում բոլորովին գոյություն չուներ:

Խաղաղ ովկիանոսը, Բարենցի ծովը,

Հյուսիսի և Արևելքի ծովերն ամբողջովին
ստարերկրյա խոշոր ձկնարդյունաբերողնե-
րի ձեռքին ելին գտնվում : Հեղափոխության
տարիների ընթացքում մենք ստեղծել ենք
ձկնորսական նավատորմ : Այժմ 91 տրաու-
լեր (ուռկանակիր) աշխատում են ծովերում ,
գերազանցապես Բարենցի ծովում : Նրանք
վորսում են բրաձուկ , ծովային պերկես :
Կրաբի իննը լողացող կոնսերվի գործարան-
ները կրաբ են վորսում Սադաղ ովկիանո-
սում : Մեր կետ վորսացող նավատորմի
տասնյակ նավեր կետ են վորսում ու վերա-
մշակում : Մենք ստեղծել ենք ձկնորսական
հզոր նավատորմ , այնպիսին , վորի նմանը
յերբեք չի յեղել ցարական Ռուսաստանում :
Դա նոր տեխնիկա չէ , վորը մենք նոր ենք
ստեղծել : Այդ տեխնիկան վերազինեց ձըկ-
նարդյունաբերությունը : Այդ տեխնիկային
մենք տիրապետում ենք , բայց դեռ մինչև
վերջը չենք տիրապետել : Այսօր չի կարելի
ասել , վոր բոլոր տրաուլերավարներն ու
կրաբ վորսացողները տալիս են այնքան ձուկ

և կրար, վորքան նրանք կարող են տալ :
կրար վորսացող նախատորմը, ճիշտ և, ար-
դեն կատարել և տարեկան պլանը, բայց նա
ևս կարող եր ավելին տալ :

Նոր և մարդարինի արդյունաբերությու-
նը : Մենք մարդարինը վերամշակում ենք
վոչ թե փոխանյութերից, այլ հիանալի վո-
րակի բուսական յուղից, միանգամայն լա-
վորակ կենդանական ճարպերից :

Բեսլանի՝ յեգիպտացորենի մեր նոր կոմ-
բինատը պատրաստում և ոսլա, դոշար,
յուղ, կեր, շուտով կսկսի իր փորձնական
գործարանում յելուստներից յեգիպտացորե-
նի չաքար պատրաստել :

Հսկա մսի կոմբինատները, մեր յերկրի
համար այդ միանգամայն նոր ձեռնարկու-
թյունները, կառուցված են ամերիկյան
տեխնիկայի վերջին խոսքով : Կարելի չե հի-
շատակել նաև կաթի այնպիսի կոմբինատ-
ներ, ինչպիսին և Լենինգրադի կոմբինատը,
վորոնք նոր են ստեղծվել :

ՀԻՆ ՏՈՒՓԵՐԻ ՍԵՋ ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱ

Բայց կան սննդի արդյունաբերության
նաև այնպիսի ճյուղեր, վորոնք գոյություն
ունեցին և առաջ, նախքան հեղափոխու-
թյունը: Շաքարի արդյունաբերության մեջ,
որինակ, չափազանց շատ է հին գործարան-
ների թիվը: Բայց, ըստ եյության, այդ
հին գործարանների մասին նույնպես պետք
է ասել, վոր դրանցից շատերը հին աու-
փեր են նոր տեխնիկայով, նոր «խորիզով»:
Շաքարի գործարաններից շատերի մեջ հըս-
կայական մեքենայացում է կատարվել,
դրվել է նոր ապարատուրա: Կառուցված են
նաև շաքարի բոլորովին նոր գործարաններ,
մասնավորապես ութը շաքարի գործարան
Արևելքում, վորտեղ առաջ և վոչ մի գոր-
ծարան չկար:

Կամ թե վերցնենք, որինակ, այնպիսի մի
հին ճյուղ, վորպիսին ծխախոտի արդյու-
նաբերությունն է: Մենք այժմ ավարտում
ենք միայն մեկ նոր գործարան՝ Ալմա-Ա-

Թայում . ծխախոտի մնացած բոլոր գործա-
 րանները հին են : Բայց ինչ են ներկայաց-
 նում ծխախոտի այդ «հին» գործարանները :
 Դրանք նույնպես միանգամայն նոր տեխնի-
 կա չեն հին տոպիերի մեջ : 1913 թվականին
 յեղել է 120 ծխախոտի գործարան , վորոնք
 արտադրելիս են յեղել 27 միլիարդ ուլանակ
 (առանց տնայնագործական արտադրանքի) :
 1935 թվականին մենք ունենք 21 գործարան՝
 նախկին 120-ի փոխարեն , բայց այդ 21
 գործարանները 1935 թվականին տվել են
 78 միլիարդ գլանակ , իսկ յեկող տարի կը-
 տան 87 միլիարդ : Բանվորների թիվն այդ
 գործարաններում ավելի պակաս է , քան այն
 ժամանակ , իսկ արտադրանքը յերեք անգամ
 ավելի յե : Հենց միայն մեկ ստախանովա-
 կան , Մոսկվայի կոմյերիտուհի Նինա Վոլ-
 կովան , «Յավա» գործարանում մեկ հեր-
 թափոխում տալիս է կես միլիոն կամ , ավե-
 լի ճիշտ , 540 հազար գիլդի : Ֆեոդոսիայի
 գործարանում ստախանովական , Ղրիմի
 կոմյերիտուհի Մուրադոսիլովան մեկ հեր-

Թափոխում տալի սե 560 հազար գլանուկ :
Կես միլիոն հատ : Ծխախոտի գործարաններում
աշխատում են նոր ավտոմատ մե-
քենաներ , վորոնք միայն հին տուփի մեջ են
դանվում : Ըստ եյուլթյան դրանք նոր գոր-
ծարաններ են :

Արտեմովսկի հին աղահանքերում մենք
հարյուր տոկոսով մեքենայացրել ենք աղի
հանույթը : Այնտեղ կան գայլիկոնող մեքե-
նաներ և հանքահատ մուրճեր , 100 տոկոսով
մեքենայացված և աղի փոխադրումը հան-
քերում , գետնի յերես դուրս բերելը և բեռ-
նումը : Բասկունչակի աղահանքերում , վոր-
տեղ աղն ստանում են լճից , դեռ չորս տարի
սրանից առաջ մոտ 5000 բանվորներ , գերա-
զանցապես կողակներ , աղը հանում էյին
ձեռքով , մինչև գոտին աղաջրի մեջ խրված :
Այժմ այնտեղ և վոչ մի փուլ աղ ձեռքով
չի հանվում , այլ աշխատում են հզոր եքս-
կավատորներ և աղ ծծող մեքենաներ , վո-
րոնք յերեք անգամ ավելի աղ են հանում ,
քան հանվում էր 1930-1931 թվականներին ,

իսկ բանվորներին թիվը կրճատվել է ավելի քան չորս անգամ : Մեկ աղ ծծող մեքենան մեկ որվա ընթացքում լճից հանում է բեռնում է 80 վազոն աղ :

Մեկ աղ ծծող մեքենան սեղոնի ընթացքում տալիս է քառորդ միլիոն տոնն աղ : Բասկոլենչակի հին լճի վրա, վորն աղ մատակարարող է յեղել համարյա հենց այն ժամանակներից, յերբ Վոլգայի ափերին բնակություն է հաստատվել, այդ լճի վրա այժմ հնից չի մնացել և վոչ մի բան : Ամբողջ սարքավորումը նոր է :

Կամ թե ահա սպիրտի արդյունաբերությունը : Նա, ասենք, ավելի հին է : Ֆարական Ռուսաստանում սպիրտ պատրաստում էյին վաղուց իվեր : Բայց մենք ամբողջ հին տեխնիկան ավելի ու ավելի յենք փոխարինում նորով : Սպիրտի արդյունաբերությունը 1913 թվականին ունեցել է 1905 դործարան, այժմ մեր յերկրում ունենք ընդամենը սպիրտի դործող 473 դործարան : 1913 թվականին այդ 1905 հին դործարան-

ները տալիս էին 45 միլիոն դեկալիտր
սպիրտ, իսկ 1935 թվականին 473 գործարան
ները տվել են 60 միլիոն դեկալիտր, յեկոդ
տարի այդ նույն գործարանների համար
մենք վերցնում ենք 70 միլիոն դեկալիտրի
ծրագիր, բայց կարող էինք վերցնել և ա-
վելին: Սպիրտի գործարանների տեխնիկա-
կան գինվածութունը վերջին տարիների ըն-
թացքում բարձրացել և կրկնակի չափով:
Հայնորեն ոգտագործվում և էլեկտրոնե-
րա-գիտ, խոշոր փոփոխություններ են կա-
տարվել տեխնոլոգիական սրտցեսների մեջ,
պակասել են կորուստները և ավելացել և
արտադրանքը: Կիսագրագետ գինեգործ վար-
պետի փոխարեն գործարաններում յերևան
և յեկել գրագետ ինժեները: Բոլոր գործա-
րաններն ունեն լաբորատորիաներ, մի բան,
վոր առաջ չկար:

Սպիրտի արդյունաբերության մեջ կան
նաև նոր գործարաններ, ինչպես, որինակ,
Յեֆրեմովյան, Լոխվիցկի, Պետրովսկի
գործարանները, — նորագույն տեխնիկայի

գործարաններ : Մեր առաջ խոշոր խնդիր է
կանգնած — սպիրտի արդյունաբերությունը
պետք է յուրացնի տեխնիկական սպիրտի
նոր տեսակների արտադրությունը : Մենք
ձեռնամուխ ենք յեղել , որինակ , այսպես
կոչված արսուլուտ սպիրտի մշակությանը ,
վորի արտադրությունն այժմ սկսել է զար-
գանալ բոլոր յերկիրներում : Արսուլուտ
սպիրտն անհրաժեշտ է մի շարք տեխնիկական
կարիքների համար , մասնավորապես ավիա-
ցիայի ու ավտոմոբիլների համար :

Կան հրուշակեղենի գործարաններ , այս-
պես կոչված նախկին Եյնեմ , նախկին Սիու-
և այլ գործարանները : Բայց , իհարկե , յեթե
վորեւե մեկն առաջ յեղել է այդ գործարան-
ներում , նա այժմ այնտեղ վոչինչ չի ճանա-
չի , վոչ մի հին բան չի գտնի այնտեղ , բա-
ցի պատերից :

Ահա «Կրասնի Ոկտյաբր» գործարանը—
նախկին «Եյնեմը»-ը , այդ գործարանը 1913
թվականին տվել է 7000 տոնն արտադրանք ,
1935 թվականին՝ 37,600 տոնն , իսկ 1936

Թվականի պլանը 42 հազար տոնն է—վեց
անգամ ավելի շատ հիանալի կոնֆետ : Առաջ
այդ գործարանում ամեն ինչ ձեռքով եր
կատարվում, իսկ այժմ այնտեղ ամենուրեք
մեքենաներ են դրված :

Կամ թե Մոսկվայի մեկ այլ գործարան՝
Բարայեվի անվան գործարանը (նախկին Աբ-
րիկոսովի) : 1913 թվականին այդ գործա-
րանը տվել է 3700 տոնն արտադրանք, 1935
թվականին նա տվել է 42 հազար տոնն :

Բիսկվիտի «Բուշևիկ» գործարանը (նախ-
կին «Սիոլ») 1913 թվականին արտադրելիս
է յեղել 5,395 տոնն բիսկվիտ, իսկ 1935 թվ-
ականին այդ գործարանը տվել է 38 հազար
տոնն բիսկվիտ : Այդ գործարանի ստախա-
նովականները հասել են արտադրության
այնպիսի արագացման, աշխատանքի այն-
պիսի բարելավման, վոր այդ գործարանի
դիրեկտոր շքանշանակիր ընկեր Կոպալինը
խոստանում է յեկող տարի խիստ ավելաց-
նել արտադրողականությունը և 52 հազար
տոնն բիսկվիտի ծրագիր է ստանձնել : Իսկ չե՞

վոր «ԲՈՂԵԼԻ»-ի բխկվիտները հիանալի
վորակի յեն և խլվում են սպառողի կողմից :

Հեղափոխությունից առաջ 142 քիչ թե
շատ խոշոր գործարանները 70 հազար տոնն
հրուշակային ապրանք են արտադրել : Իսկ
այժմ մեր միայն 2 գործարաններն են տալիս
այդքան արտադրանք : Վերջին յերեք տար-
վա ընթացքում կառուցված և հինգ նոր հը-
րուշակեղենի գործարան :

Դրանք ել ի՞նչ «հին արտադրություննե-
րն : Դրանք նոր ձեռնարկություններ են հին
շենքերում :

1928 թվականին մենք արտադրել ենք 101
հազար տոնն կոնֆետ ու բխկվիտ : Սներն-
դարյունաբերության ժողկոմատի ձեռնար-
կությունների յեկող տարվա ծրագիրը կադ-
մում և 440 հազար տոնն : Հին Ռուսաս-
տանը յերբեք չի տեսել այդքան հրուշակե-
ղեն : Իսկ մեզ մոտ այդ արտադրությունը
հետադաշում ևս կա՞նի թե քանակի տեսա-
կետից , թե վորակի և թե ասորտիմենտի
տեսակետից :

Նույնպիսի արմատական փոփոխութիւններ են կատարվել նաեւ ձկնարդյունաբերութեան հին ձեռնարկութիւններում: 1929 թվականին մենք ձկնորսութեան բոլոր ավազաններում ունեւինք 560 մսաորային նաւ՝ 35 հազար ձիու ուժի ընդհանուր կարողութեամբ: Այժմ ունենք 3150 մսաորային նաւ ու շուրջնաւ՝ 230 հազար ձիու ուժի ընդհանուր կարողութեամբ: Վերջին վեց տարվա ընթացքում համարյա 7 անգամ ավելացել է ձկնարդյունաբերութեան երկրագործականութեանը:

ՆՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՄԱՐԴԻԿ,
ՆՈՐ ԿՈՒՆՏՈՒՐԱ

Բայց մենք ունենք արտադրութեան նաեւ այլ ճյուղեր, վարտեղ նոր ձեռնարկութիւններ իրողքին կան ավելի մեծ թվով հին, չվերականգնված ձեռնարկութիւններ:

Մենք ունենք հազիւ գործարաններ, վորդեկավարում եւ ընդհանուր յեւր: 1929 թվականին մենք ունեւինք Լենինք ավազանում գործարան, իսկ այժմ մենք արդարեւ



սի 23 գործարան : Դրանք տեխնիկայի վեր-
ջին խոսքով կազմակերպված ձեռնարկու-
թյուններ են : Ընդամենը մենք ունենք 263
մեքենայացված հացի գործարան ու ավտո-
մատ գործարան : Բայց հացի այդ հիանալի
նոր գործարանների կողքին կան նաև բազ-
մաթիվ մեքենայացված փուեր և մանր , չը-
մեքենայացված փուեր : Մենք պետք է ա-
պագայում դրանք փոխարինենք նորերով ,
իսկ մինչ այդ հարկավոր է այնպես աշխա-
տել այդ փուերում , վորպեսզի նրանցից
ստացվի այն ամենն , ինչ հնարավոր է հացի
թե' քանակի և թե' վորակի տեսակետից :
Մենք այդ բանը կարող ենք անել լավ աշ-
խատանքի դեպքում , լավ վարպետներ ու
աշխատողներ ունենալու դեպքում : Յեվ
մենք այդ որ-որի վրա ավելի լավ ենք ա-
նում :

Յեթե համեմատելու լինենք նախկին
անդարդյունաբերությունը ներկայիս հետ ,
յեթե համեմատելու լինենք նախկին մարդ-
կանց ներկայիս մարդկանց հետ , ապա չեք

ճանաչի վաղ մարդկանց և վո՛չ ել ձեռնարկ-
կուլթյունները :

Առաջ սննդի ձեռնարկուլթյուններն եյին
գնում գերազանցապես կին-բանվորուհիներ ,
վորոնց կարիքն եր քչում այդ գործարան-
ները : Նրանք աշխատում եյին վողորմելի
գրոշների համար , կուշտ չեյին ուտում ,
լրիվ չեյին քնում , ման եյին գալիս անլվա ,
պատառուտված :

Նախահեղափոխական սննդարդյունաբե-
րուլթյան կադրերի մասին վառ պատկերա-
ցում ստանալու համար լավ կլինի հիշել մեր
հանճարեղ վարպետ Մաքսիմ Գորկու «26-ը
և մեկը» պատմվածքը : Այդ պատմվածքի
մեջ ցնցող ուժով ու ճշգրտուլթյամբ նկա-
րագրված ե հացագործ բանվորի նախահե-
ղափոխական կյանքը :

«Որը որին մենք ալյուրի փոշու մեջ ,
մեր վոտքերի հետ բակից բերած կեղտի
մեջ , թանձր ու գարշահոտ ոդի մեջ խմոր
եյինք հունցում և կրենդել պատրաս-
տում , դրանք թրջելով մեր քրտինքով , և

մենք սուր ատելությամբ ատում եյինք
մեր աշխատանքը, մենք յերբեք չեյինք
ուսում այն, ինչ դուրս եր գալիս մեր
ձեռքի տակից, սե հացը գերադասելով
կրենդելից» :

Նրանց մոտ ատելություն կար դեպի աշ-
խատանքը, վորովհետև նրանց աշխատանքը
տաժանակիր աշխատանք եր : Իսկ մեզ մոտ
ստախտանովյան շարժում ե, մեզ մոտ աշ-
խատանքը փառքի, պատվի, արիւթյան ու
հերոսության գործ ե :

«Այդպես եյինք ապրում մենք 26 հո-
գով—պատմում ե Գորկին—քալե մեծ
տան նկուղում, և մեզ համար այն աս-
տիճան ծանր եր կյանքը, վոր կարծեք թե
այդ տան բոլոր յերեք հարկերը կա-
ռուցված եյին ուղղակի մեր ուսերի
վրա» :

Իսկ այժմ, գնացեք Մոսկվայի վորևե
հացի գործարան, կամ թե նույնիսկ հոսա-
րակ փուռը : Նայեցեք մեր բանվորներին ու
բանվորուհիներին : Դեմքից արդեն կարելի

յե իմանալ, վոր դրանք նոր, այլ մարդիկ
են—դեմքերը կայտառ, հրճվալից, առողջ։
Մարդիկ վառվում են ե՛լ ավելի լավ աշ-
խատելու ցանկությամբ, վորպեսզի ե՛լ ավել-
ի լավ ապրեն։ Մեզ մոտ, դործարաններում
արդեն ընդունված ե քանվորների համար
անպայման ջրցան (դուշ) ունենալ։ Առա-
վոտյան գալիս են ու լողանում։ Մարմինը
մաքուր ե, արտահագուստը մաքուր։ Ամեն
առավոտ մանիկյուր անելն այլևս հին աշ-
խարհի վերին հարկերի տիկիկներին մենա-
շնորհը չե։ Մանիկյուրն այժմ անհրա-
ժեշտ տուժեալ ե անդարդյունաբերության
քանվորուհիների համար։ Մենք, ըստ ամե-
նայնի, պաշտպանում ենք հիգիենիկ սովո-
րույթները։ Մարմնամարդություն, Ֆիզ-
կուլտուրա, առավոտյան լիցք, ակումբներ,
մանկապարտեզներ, մանկամսուրներ, պոլի-
կլինիկա, վորտեղ բուժվում են մեր բան-
վորները և վորտեղ գնում են նրանք իրենց
առողջությունն ստուգելու։ Մենք և վոչ
մի մարդու չենք ընդունում ձեռնարկու-

թյուն, առանց նրա առողջության վիճակն
ստուգելու: Մենք հետո ել սխառմամբիկա-
րաբ ստուգում ենք բանվորների ու բանվո-
րուհիների առողջական վիճակը:

Այս են մեր նոր մարդիկ, նոր արդյունա-
բերությունը, նոր կուլտուրան, վորք վոչ
մի ընդհանուր բան չունի «ՁՅ-ը և մեկը»
պատմվածքի մեջ նկարված պատկերի հետ:

Ձի կարելի անցնել մեզ համար այնպիսի
կարևոր նշանակություն ունեցող արդյու-
նաբերության մի ճյուղի կողքով, ինչպիսին
ձեթ-ոճառի արդյունաբերությունն է, թեև
այնտեղ նոր, տեխնիկապես գինված դո-
ծարանների կողքին կան շատ մանր, տնայ-
նագործական ձեռնարկություններ:

Մինչև հեղափոխությունը յերկրում յեղել
է մոտ 7 հազար մանր ոճառի դործարան:
Այս վերջին 8 տարվա ընթացքում մենք կա-
ռուցել ենք 280 նոր, մեքենայացված դո-
ծարան, վորոնք փոխարինել են 4000 հին,
մանր, ձեռքի ուժով կամ ձիու միջոցով
աշխատող դործարաններին: Մենք առաջի-

կայում եւ մեծ կերպ բարեկամելով զան-
դերձ ճիշտ գործարաններէ աշխատանքը,
վարպետի նրանք ավելի աւ ավելի լավ աշ-
խատեն, անսխալաբար այդ մանր գործա-
րանները կ'սխալանանք ավելի խոշոր, ավելի
մեծեցանցով: Գործարաններով:

Յուզ մենք այժմ արտադրում ենք զգալի-
որեն ավելի շատ, քան միջին պատերազմը:
Առաջ յուզ պատրաստում էինք գլխավորապե-
սեւ Սիբիրում, Վոլոգդայում եւ Ուստյում:
Ուկրաինան, արիւնկ, միայն ներմուծվող
յուզ եր գործածում, իսկ այժմ մենք Ուկ-
րաինայում պատրաստում ենք այնպիսի
յուզ, այնպիսի լավ վարակի, վաթ նա գով-
ված եւ վաչ միայն մեզ մօտ, այլեւ արտա-
սահմանում:

Պատիշով = Բարձր վարակի:

Միկոյան = Այո, բարձր վարակի: Մի ժո-
մանակ ուկրաինական յուզի վարակն այն-
չափ բարձր եր մյուսներին, վաթ մենք այդ
յուզն արտահանում էինք արտասահման,
իսկ Սիբիրի յուզը ներմուծում էինք Ու-

կրախնա : Այո , կար այդպիսի ժամանակ :
Այժմ մենք ազատվեցինք այդ բանն անելու
անհրաժեշտությունից : Այժմ մենք ամենու-
րեք ունենք անհրաժեշտ քանակությամբ հի-
անալի յուղ և՛ Սիբիրի , և՛ Վոլոգդայի , և՛
Ուկրաինայի :

Այս ե ամենաընդհանուր զծերով սննդար-
դյունաբերության բնութագիրը՝ նրա տեխ-
նիկական վերազինման տեսակետից : Այդ
նոր տեխնիկայի հիման վրա , նոր տեխնի-
կան նոր կադրերի կողմից յուրացվելու հի-
ման վրա , մեզ մոտ , սննդարդյունաբերու-
թյան մեջ , առաջ յեկավ ստախանովյան
շարժումը :

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մեր արդյունաբերության բանվորները
ջերմագին արձագանքեցին Ալեքսեյ Ստախա-
նովի նախաձեռնությանը՝ ծավալելով
ստախանովյան շարժումը սննդի ձեռնար-
կություններում :

Առաջին հերթին պետք է խոսել շաքարի արդյունաբերության մեջ ծավալված ստախանության շարժման մասին :

Շաքարագործ ստախանութականների շարժմանն սկիզբ դրվեց Կալինինսկի շաքարի գործարանում : Դա լավ, խոշոր, լավ մեքենայացված գործարան է Վորոնեժի մարզում : Գործարանի դիրեկտորն է ընկ. Բուլդովիչը, գլխավոր ինժեները՝ ընկ. Ուեյնիկովը (ինժեներ Ուեյնիկովներ յերեք յեղբայրներից մեկը, վորոնք աշխատում են շաքարի յերեք գործարաններում—Կալինինսկի, Երտիլսկի և Բիյսկի գործարաններում վորպես գլխավոր ինժեներներ) : Այդ գործարանում ղեկավարության կողմից ցուցաբերվող լավ ոգնության պայմաններում բանվոր Լիտվինենկոն սկսեց յերկու ասպարատի փոխարեն ստատարկել 6 ասպարատ և, վոր գլխավորն է, բարձրացնելով յուրաքանչյուր ասպարատի կարողությունը : Այդ նախաձեռնությանն արձագանքեցին բանվորներ Գալինա Կովտունը և Ռոզովայը :

տեխնիկայի տեսակետից առաջնակարգ՝
Ստալինի անվան շաքարի գործարանում,
անցնելով 9 ապարատի, նաև արագացնելով
ապարատների աշխատանքը, հերթականու-
թյան խիստ գրաֆիկ մտցնելով վակուում-
ապարատից ուտֆելը բեռնելու և բաց թող-
նելու գործում ու կարգավորելով շոգու
հաղորդումը:

Վոչ միայն սննդի, այլև թեթև արդյու-
նաբերության մեջ կա ստախանովյան շարժ-
ման յերկու ձև, յերկու հոսանք, վորոնք
հաճախ միահյուսվում են միմյանց հետ:
Առաջինը—յերբ մեկ բանվորը ձեռնամուխ է
լինում սպասարկելու մեծ քանակությամբ
ադրեգատներ: Այսպես, որինակ, Վինոգրա-
դովաները ձեռնամուխ յեղան 50-ի փոխա-
րեն սպասարկելու 200-ից ավելի հաստոց:
Այդ հիանալի գործ է: Դա ապացուցում է,
վոր բանվորուհիները բարձրացնելով իրենց
աշխատանքի արտադրողականությունը,
պաշտպանում են իրենց պետությունն ու
կառավարությունը: Բայց դա դեռ չի

բարձրացնում յուրաքանչյուր առանձին
հաստոցի արտադրանքը, չի բարձրացնում
սարքավորման արտադրողականությունը :
Մյուս հոսանքն այն է, յերբ ստախանովա-
կաններն ավելացնում են յուրաքանչյուր
հաստոցի, յուրաքանչյուր սպարատի ար-
տադրանքի ընդհանուր քանակը, բարձրաց-
նում են տվյալ ագրեգատի, մեքենայի,
հաստոցի կարողությունը և դրանով իսկ
բարձրացնում գործարանի արտադրական
կարողությունը :

Ընկեր Լիտվինենկոյի մասուցած ծառա-
յությունն այն է, վոր նա վոչ միայն ձեռ-
նամուխ յեղավ վեց վակուում-սպարատի
օպասարկման՝ յերկուսի փոխարեն, այլև
բարձրացրեց չաքարը յեփելու արտադրությու-
նը և դրանով իսկ ավելի քան 30 տոկոսով
բարձրացրեց վակուումի արտադրողականու-
թյունը, վոչ միայն չվատացնելով արտա-
դրանքի վորակը, այլ նույնիսկ ըավացնելով
այն : Միջին հաշվով առաջին մթերքի ուտ-
ֆելի (թանձրացած չաքարի սիրոպ) յե-

փեթու արագությունը չորս ժամվա փոխա-
րեն ընկեր Լիտվինենկոն հասցրեց 2 ժամ-
վա : Յերկու անգամ արագացնելով առաջին
միջերթի յեփը, ընկեր Լիտվինենկոն 2-րդ
միջերթի ուտֆելի յեփը 12 ժամից կրճատեց
8 ժամվա :

Շաքարի արդյունաբերության մեջ վա-
կուում-ապարանների աշխատանքը նեղ
տեղ էր : Բայց ահա ընկեր Լիտվինենկոն իր
նախաձեռնությամբ «լցրեց» այդ նեղ տեղը :
Գործարանների արտադրողականությունն
ընկեր Լիտվինենկոյի նախաձեռնությամբ
բարձրանում է 30 տոկոսով :

Կարող են ասել, թե Սլեքսեյ Ստախանովն
աճման այնպիսի տոկոս է տվել մեզ, վոր
վակուում-ապարանի արտադրողականու-
թյունը 30 տոկոսով ավելացնելը նրա շե-
կորդի համեմատությամբ դատարկ բան է :
Կասեն թե, հա՛ դարձացրին մեզ իրենց 30
տոկոսով, մինչդեռ Ստախանովը տվել է
1000 տոկոս աճում :

Աճման այդպիսի տոկոս անհնարին է չա-

քարի արդյունաբերության մեջ: Շախտե-
րում հանքահատ մուրճը, սպասելով քարա-
ծուխը դուրս տանելուն և հանքախորշը ամ-
րացնելուն, ավելի շատ պարապ էր կանգ-
նում, քան թե աշխատում: Իսկ չաքարի
գործարանն աշխատում է գլիշեր-ցերեկ, ա-
ռանց ընդմիջման: Այստեղ ռեդեր:իներն
այնպես մեծ չեն, ինչպես հանքահատ մուր-
ճինը: Շաքարի արդյունաբերության մեջ
կարողության լրացուցիչ 30 տոկոս գտնելը
հակադրական գործ է, վորի մասին առաջ
չեյին յերազում նույնիսկ առաջավոր ինժե-
ներները:

Ի՞նչ է նշանակում չաքարի բոլոր գործա-
րանների հզորության ավելացման յուրա-
քանչյուր տոկոսը: Յուրաքանչյուր տոկո-
սը հավասար է մի խոշոր չաքարի գործա-
րանի, կամ թե յերկու միջակ գործարան-
ների արտադրողականության: Այդպիսի
խոշոր գործարանն արժե 22—24 միլիոն
ռուբլի: Յեթե մենք ընկեր Լիտվինենկոյի
նախաձեռնությունը տարածենք չաքա-

րի բոլոր գործարաններում, լցնենք
նեղ տեղերը, — իսկ դա մեր խնդիրն է
և մեր պարտականութիւնը, — ապա կ'ստաց-
վի, վոր շաքարագործ ստախանովականներն
իրենց պետութեան համար տնտեսում են
այնպիսի մի գումար, վորը հավասար է 30
նոր խոշոր շաքարի գործարանների կառուց-
ման: Իսկ այդ կազմում է 600—700 մի-
լիոն ռ.:

Այստեղից ամենևին չի հեռւում, վոր
մենք չպետք է կառուցենք շաքարի նոր
գործարաններ, վոր պետք է այդ շինարա-
րութիւնը հետ պահենք այնպես, ինչպես
մենք հետ ենք պահում սպիրտի գործարան-
ների մի մասի շինարարութեան ավարտու-
մը: Սպիրտի պահանջը մենք բավարարում
ենք լիովին, սպիրտի պլանները գերակա-
տարելու մենք տեղ չունենք, իսկ շաքարի
ստացարեղում հարկավոր է գերակատարել
այնքան, վորքան հնարավորութիւններ
կան: Ուստի և մենք պատրաստվում ենք
թե՛ շաքարի նոր գործարաններ կառուցելու

և թե՛ վերագրինելու հին գործարանները՝
արագորեն տարածելով ընկեր Լիտվինենկո-
յի փորձը, վորպեսզի վոչ միայն կատարենք
չափարի յերկրորդ հնգամյակը, այլև ապա-
հովենք նրա լուրջ դերակատարումը:

Այդ առաջել ևս հնարավոր է ու պարտա-
դիր, վորովհետև ընկեր Ստալինը վերջերս
ամուր լիցք տվեց մեր ճակնդեղագործ կու-
տընտեսականներին ու կոլտնտեսուհիներին,
ինչպես նաև ճակնդեղի չրջանների կուսակ-
ցական կազմակերպություններին: Յեվ յե-
թե 1935 թվականին ճակնդեղի մշակու-
թյան չրջաններն արդեն տվել են 155 միլիոն
ցենտների ճակնդեղ, մի բան, վոր առաջ յեր-
բեք չի յեղել, ապա 1936 թվականին մենք
կհավաքենք շատ ու շատ ավելի ճակնդեղ:
Այն առաջադրանքը, հեկտարից 200—250
ցենտների, վոր ընկ. Ստալինը տվել է Ու-
կրաինայի համար, փոքր առաջադրանք է,
բայց մենք տեսնում ենք, վոր կոլտնտեսու-
հիները մինչև այժմ չտեսնված հոգատա-
րությամբ, դեռ աչնանից ձեռնամուխ են

յեղել ապագա բերքի պատրաստմանը: Նը-
րանք արդեն հավաքում են ծտերի աղբը,
գոմաղբի թանձրահեղուկը, այն ամենը,
ինչ անհրաժեշտ է բերքատվությունը բարձ-
րացնելու համար: Հենց միայն խարկովի
մարզում արդեն 4000 ողակավար կոլտնտե-
սուհիներ պարտավորվել են դառնալ 500-
ականներ, իսկ չե՞ վոր դրանց թիվը դեռ
վերջերս, միայն տասնյակներով էր հաշ-
վվում:

Ճակնդեղի բերքատվության մասին ընկեր
Ստալինի տված առաջադրանքի կատարումը
նշանակում է, վոր յեկող տարի ճակնդեղ
ստացվելու յե վոչ թե 155 միլիոն ցենտներ,
ինչպես այս տարի, այլ 240—250 միլիոն
ցենտներ: Իսկ չափարի նոր, լրացուցիչ
գործարաններ 1936 թվականին շահագործ-
ման կհանձնվեն ընդամենը 3 հատ: Այս
պայմաններում չափարագործ ստախանովա-
կաններն ուղղակի փրկում են չափարի ար-
դյունաբերությունը:

Յես առաջ կանչում էյի չափարագործնե-

րին և հարցնում, թե ի՞նչ վիճակումն է հնգամյակը, ապահովվա՞ծ է արդյոք յերկրորդ հնգամյակի կատարումն ու գերակատարումը, 1937 թվականին կտա՞ք արդյոք 25 միլիոն ցենտներ չաքար: Նրանք սլասախանում եյին, թե հարկավոր է շատ գործարաններ կառուցել, վերակառուցել այսինչ ու այն-ինչ գործարանը և այն ժամանակ կարելի կլինի կատարել առաջադրանքը: Այնքան բազմապիսի պայմաններ եյին առաջադրում չաքարագործները, վոր դրանցից վորևէ մեկը չկատարելը կարող էր հիմք դառնալ պլանի թերակատարման համար:

Իսկ այժմ այդ նույն չաքարագործները, ստախանովականների հասմամիով թենական առաջին խորհրդակցությունից և ընկեր Ստալինի ճառից հետո, առանց վորևէ պայմանի ու առանց վորևէ ընդդիմադրության, վոչ թե 1937, այլ 1936 թվականի համար ստանձնեցին հնգամյակի վերջին տարվա ծրագիրը—25 միլիոն ցենտներ չաքարավազ:

Ահա թե ինչ տվեց մեզ ստախանովյան

չարժուժը շաքարի արդյունաբերության
մեջ :

Ստալինի անվան շաքարի գործարանը
(Լոխվիցի) — խոշորագույնն է մեր յեր-
կրում . առենք Յեվրոպայումն ել այդպիսի
գործարաններ ընդամենը մի քանի հատ-
կան : Այդ գործարանը , վորն ունի Չեխո-
սլովակիայից ներմուծված սարքավորում ,
նախատեսված էր որական 20 հազար ցենտ-
ներ ճակնդեղի վերամշակության համար :
Անցյալ տարի արդեն գերակատարելով նոր-
ման , նա հասավ որական 24 հազ . ցենտնե-
րի , իսկ այս տարի նա որական վերամշա-
կում է 25—27 հազար ցենտներ : Յեվ ահա
այժմ գործարանի բանվորներն առում են .
«յեթե տաք 500 հազար ռուբլի , ապա մենք
կարող ենք գործարանի կարողությունն ա-
վելացնել որական 10 հազ . ցենտներ ճակըն-
դեղով , այսինքն գործարանի կարողությու-
նը հասցնել որական մինչև 35 հազար ցենտ-
ներին» : Ըստ եյության այդ վերակառուցու-
մը համապարագոր է 20 միլիոն արժողու-

Թյամբ մի նոր գործարանի: Այսպիսով
ստացվում է, վոր յեթե լցնենք վորոշ նեղ
տեղեր, վորոշ սարքավորում ավելացնենք
այդ նույն գործարանային տուփի մեջ, ա-
յա դա կլինի նոր գործարան, նոր հսկա,
վորն որական կվերամշակի 200 վագոն ճա-
կընդեղ և ամեն որ կարտադրի 30 վագոն
շաքար: Այդ հսկայական մի ձեռնարկու-
թյուն է:

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ—ՏԱԼ 130 ՄԻԼԻՈՆ
ՓՈՒԹ ՇԱՔԱՐ—ԿԳԵՐԱԿԱՏԱՐՎԻ

Շաքարի արդյունաբերությունն այս տա-
րի գերակատարում է արտադրանքի սահ-
մանված նորմաները և տեխնիկական կարո-
ղություն նորմաները: Պետք է ուղղակի ա-
սել, վոր այդ նորմաները լարված չեյին:
Հումք քիչ կար: Ուստի և գլխավոր խնդիրը
մինչև վերջին տարին այն չեր, վոր ավե-
լացվի ճակնդեղի վերամշակություն որական
քանակը, այլ՝ ավելի շատ շաքար ստանալ

ճակնդեղից : Այն ժամանակ չափ չաքարա-
գործներ պնդում էյին, թե ճակնդե-
ղից ստացվող չաքարի քանակակաթյունն ա-
վելացնել և կորուստների դեմ պայքարել
հնարավոր է այն դեպքում, յեթե պակա-
սեցվի գործարանների հրական բեռնվածու-
թյունը ճակնդեղով : Դրանով էլ հենց պետք
է բացատրել այն վեր չաքարի գործարան-
ների կարողակաթյան տեխնիկական նորմա-
ները համեմատաբար թեթեւ էյին, պակա-
սեցված :

Այժմ արդեն ապացուցված է այն պնդման
անճշտակաթյունը, թե իբր չի կարելի չաքար-
ի ավելի մեծ տեղի ստանալ չաքարի գոր-
ծարանների բեռնավորումն ավելացնել և
արտադրակաթյան պրոցեսներն արագացնել
դեպքում : Շաքարի գործարանները ճակնդե-
ղի վերամշակման իրենց նորմաներն այս տա-
րի կատարում են 111 տեղիով : Ըստ վերում,
չաքարի ստացումը հաստատված նորմայից
բարձր է, փաստացի կորուստները նոր-
մայից ցածր : Ճիշտ է, այս տարի ճակնդե-

դը հիանալի վորակի յեր, աշխատանքի
 պայմանները լավ, գործարանների վերանո-
 րոգումը լավ և կատարված և կադրերը
 պատրաստված են ավելի լավ: Կան աշնայի-
 սի գործարաններ, ինչպես, որինակ, Շեպե-
 տովյան գործարանը (դիրեկտոր ընկ. Մալի-
 կով, գլխավոր ինժեներ ընկ. Բակովովս-
 կի), վորն արտադրողականության որական
 նորման կատարում և 135 տոկոսով, Անտո-
 նինյան գործարանը — 121 տոկոսով (դի-
 րեկտոր ընկ. Բուրմիստրով, գլխավոր ին-
 ժեներ ընկ. Արարսկի), Պարխոմովյան գոր-
 ծարանը — 123 տոկոսով (դիրեկտոր ընկ.
 Դեմչենկո, գլխավոր ինժեներ ընկ. Ուլինս-
 կի), իսկ միջին հաշվով գործարանները
 պլանը կատարում են միայն 111 տոկոսով:
 Այդ նշանակում և, վոր կան գործարաններ,
 վոր որական նորման կատարում են 102—103
 տոկոսով, և կան աշնայիսիները, վորոնք կա-
 տարում են 100 տոկոսից ել պակաս: Ահա
 Վիննիցկու մարզի Ստարո-Սինյավսկի գոր-
 ծարանը — աշխատում և խայտառակ կեր-

պով, որովա նորման կատարում ե միայն 78
տոկոսով: Դիրեկտոր ընկ: Կուլիշին և գլխավոր
ինժեներ ընկ: Որբիվչենկոյին յետ
նախագգուշացրել եմ, վոր յեթե մինչև սե-
զոնի վերջը նրանք գործարանում գրու-
թյունը չկանոնավորեն, ապա կհանվեն աշ-
խատանքից և պաշտոնով կիջեցվեն: Համե-
նայն դեպս, կասկածից վեր ե, վոր այդ
ընկերները հետ միասին, կամ առանց նը-
րանց, Ստարո-Սինյավսկու գործարանի աշ-
խատանքը մենք կկանոնավորենք:

Միգավիայի Ռիբնիցկու գործարանը
(գիրեկտոր ընկ: Գուլ, գլխավոր ինժեներ
Դորգոնեցկի) նույնպես ծրագիրը կատա-
րում ե միայն 98 տոկոսով: Այդ գործա-
րաններում չկան ստանդարտականներ, այն-
տեղ տեխնիկական ել փոքր թվով բան-
վորներ են անցել, մինչդեռ մնացած գոր-
ծարաններում հսկայական թվով բանվորներ
լավ անցել են տեխնիկական:

Պետք ե հաշվելի տակ — չաքարագործ-
ները համար իսկական քննություն ե

վոր թե աշուհը, յերբ նրանք վառ չեն աշ-
 խատել, այլ ձմեռը: Շաքարի արդյունաբե-
 րությունը դեռ յերբեք ձմռանը չի աշխա-
 տել այդքան յերկար, ինչպես նա աշխա-
 տելու յե այս սեզոնին: Սովորաբար գործա-
 րաններն արտադրությունն ավարտում է յին
 դեկտեմբերին, նոյեմբերին, վորոշ գոր-
 ծարաններ հունվարին, և հարգարդյուն
 դեպքում մի վորեւե գործարան փետրվարին
 և մարտին: Այժմ մոտ հարյուր գործարան
 աշխատելու յեն հունվարին, փետրվարին և
 մարտին: Կուրսկի և Վորոնեժի մարզերում
 միջանի գործարան աշխատելու յեն 200 ուր:
 Իսկ չե՞ վոր ձմեռ ժամանակ միշտ ավելի
 շատ ե կորուստ յեղել և գործարանների
 կարողությունը պակասել ե: Մենք չաքա-
 րագործների առաջ այժմ խնդիր ենք
 դնում — ձմռան ընթացքում չիջեցնել ար-
 տադրողականության նորմաները: Ստախա-
 նովյան շարժումը հնարավորություն ե առ-
 լիս գերակատարելու այդ նորման:

Ճակնդեղի պահպանումը ձմռանը բարդ և
լուրջ գործ է :

Մի շարք կետերում յերկյուղ են կրում ,
վոր յեթե հատուկ զգոնությունն չցուցարե-
վի , ապա հենց վոր յեղանակները տաքա-
նան , ճակնդեղը կսկսի փչանալ և կորցնել
իր շաքարայնությունը : Բայց մենք կար-
ծում ենք , վոր այնուամենայնիվ հունվա-
րին – մարտին կարելի յե տալ վոչ պակաս
նորմա , քան դեկտեմբերին : Գործն ամելի
բարդ է մարտ–ապրիլ ամիսներին : Յեվ այ-
նուհանդերձ , այդ ամիսներին ել ճակնդեղի
ու ապարատների լավ խնամքով կարելի յե
չուռ տալ ճակնդեղի շաքարի կորստի հին
նորմաները :

Յես չեմ կասկածում , վոր ընկեր Ստալի-
նին տված մեր խոստումը՝ տալ 130 միլիոն
փութ շաքար , ինչ գնով ել լինի կկատարվի
ու կգերակատարվի : Իսկապես , խոսքը վե-
րաբերում է միայն այն բանին , թե ինչ չա-
փով կգերակատարենք մենք այդ թիվը , վո-
րովհետեւ գտնում ենք , վոր դրա համար ու-

նենք բացարձակապես բոլոր հնարավորու-
թյունները: Հերոս կլինեն այն շաքարա-
գործները, վորոնք հաջողությամբ պայքար
կմղեն, վոր ճակնդեղի վոչ մի արմատ չը-
նեխվի, վորոնք թույլ չեն տա, վոր շաքա-
րի թեկուզ մի ավելորդ հարյուրերորդա-
կան տոկոսը կորչի մնացուկներում:

ԱՐՏԱԴՐՈՒԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆՈՐՍԱՆԵՐԸ

Մենք պետք է վերանայենք շաքարի գոր-
ծարանների սարքավորման կարողության
տեխնիկական նորմաներն ու այդ գործա-
րանների արտադրական կարողությունների
տեխնիկական նորմաները և բանվորների
արտադրական կարողությունները: Այդ
մենք կանենք նոր սեզոնի սկզբից: Մենք
նույնը պետք է անենք նաև ձկնարդյունա-
բերության, սպիրտի արդյունաբերության
և միջանի այլ ճյուղերում:

Այդ նորմաները մշակելու համար մենք

կհրավիրենք գործնական աշխատողներին,
դիրեկտորներին, ինժեներներին, աստիճանո-
վական բանվորներին կոնֆերենցիաներ:

Մենք ունենք շաքարի շատ գործարաններ,
վորոնց զանազան սարքավորումների կարո-
ղությունը չափազանց խայտաբղետ է. մի
քանի ագրեգատներ ունեն 9000 ցենտներ
ճակնդեղի կարողություն, մյուսները 8000
ցենտների, մի քանիսն ել՝ 7000 ցենտների
կարողություն և գործարանների կարողու-
թյունն ընդհանուր առմամբ հաշվում են
7000 ցենտներ, այսինքն՝ հավասարվում են
նեղ տեղերին: Այդպիսով գործարանի մնա-
ցած սարքավորման 7000-ից բարձր կարո-
ղությունը մնում է վորպես մեռյալ տեխնի-
կա: Վերացնելով գործարանի նեղ տեղերը,
մենք կենդանացնում ենք այն ամենը, ինչ
վոր մինչև այդ մեռած էր: Ամենուրեք,
վորտեղ գործարանի նեղ տեղերի վերացու-
մը մեծ փոփոխություններ ու ծախսեր չի
պահանջում, ամենուրեք, վորտեղ առանց
մեծ կապիտալ ներդրումների կարելի չէ

հասնել զործարանի արտադրական կարողության մեծ եֆեկտի, գլխավոր ուշադրությունը պետք է կենտրոնացվի նեղ տեղերի վերացման վրա:

Ջանադան ցեխերում, զանադան սարքավորման կարողությունը բարձրացնելու ասպարեզում ստախանովականների կատարած աշխատանքի տարբեր արդյունքները նույնպես կարող են, վերացնելով միջանի նեղ տեղեր, ստեղծել այլ նեղ տեղեր, մի հանդամանք, վորը նույնպես պետք է մտցնել նեղ տեղերի վերացման ընդհանուր ծրագրի մեջ:

Ստախանովականների փորձի հիման վրա քննադատորեն քննելով ամբողջ զործարանի սարքավորման տեխնիկական կարողությունը և նրա արտադրական ունակությունը, անհրաժեշտ է հաստատել կարողության նոր նորմաներ, հավասարվելով ստախանովյան աշխատանքի լավագույն օրինակներին:

Ընկեր Ստալինը, ստախանովականների առաջին խորհրդակցությանն իր արտասա-

նաժ ճառում մեզ ճիշտ նախադրուչացրեց,
 վոր չի կարելի բանվորների համար սահմա-
 նել արտադրական նորմաներ՝ ստախանովա-
 վականների նվաճումների մակարդակին հա-
 վասար: Նա ասաց, վոր պետք է վերցնել
 ստախանովյան նորմայի և ստախանովա-
 կաններից հետ մնացող բանվորների նորմա-
 յի միջինը: Այդ կատարելապես ճիշտ է:
 Սակայն ընկեր Ստալինի ասածները ոխալ
 հասկացած կլինի նա, ով ընկեր Ստալինի
 այդ ցուցումը տարածի սարքավորման ար-
 տադրականության տեխնիկական նոր նոր-
 մաները վորոշելու գործի վրա: Յես կար-
 ծում եմ, վոր սարքավորման կարողության
 նորման, գործարանի արտադրական կարո-
 ղության նորման սահմանելիս մենք պետք է
 հիմք ընդունենք ստախանովականների
 բարձրագույն ցուցանիշները, վորովհետև
 կարողության տեխնիկական նորմաները
 և արտադրական նորմաները տարբեր բա-
 ներ են: Մենք չենք կարող ամեն
 տարի կամ յերկու տարին մեկ անգամ վե-

րանայել սարքավորման և գործարանների
կարողութեան նորմաները: Ձե՞ր վոր այդ
առաջուց արվում է շատ տարիների համար:

Տեխնիկական նորմաների այն վերանայու-
մը, վորին ձեռնամուխ ենք լինում մենք,
մի ամբողջ հեղաշրջում, ամբողջ հեղափո-
խութեան և խորհրդային արդյունաբերու-
թեան մեջ: Այդ նշանակում է, վոր մենք
արդեն անցել ենք այն եպոխան, յերբ ուու-
սական բանվորը հետամնաց աշխատող էր
համարվում և նա չէր տիրապետում առա-
ջավոր տեխնիկային: Ուստի նրա համար
հաստուկ նորմաներ եյին սահմանում, գլու-
նելով, վոր նա չի կարող նույն ամերիկյան
սարքավորումից ստանալ ամերիկյան ար-
տադրողականութեան: Այժմ մեր ստախա-
նովականներն այդ բոլորից անցել են, այժմ
մենք տիրապետել ենք այդ տեխնիկային,
այժմ մեր ստախանովականները հասնել են
առաջավոր կապիտալիստական յերկիրների
արտադրողականութեան նորմաներին, իսկ
տեղ-տեղ անցել են նրանցից: Մեր բանվոր-

ներք յաւրացնելով նոր տեխնիկան, պահանջ-
 ջութ են տեխնիկական նոր նորմաներ, վո-
 բանք շատ տարիներով առաջ կձգեն մեզ:
 Ուստի և տալով սարգավորման արտա-
 դրողականութիւն տեխնիկական լարված
 նորմաներ՝ մենք չենք կարող միանգամից
 հենց արտադրանքի աճուղին նորմաներ տալ
 բանվորների համար, վորին հասել են ստա-
 խանովականները, վորովհետեւ ստախանո-
 վականները դեռ վոքրամամնութիւն են
 կազմում և վորպեսզի գործարանի բոլոր
 ցեխերի աճ բողջ սարգավորումը, գործարա-
 նի բոլոր բանվորներն անբողջութիւն վեր-
 ցրած, տան աճուղին արտադրողականու-
 թիւն, վորին հասել և ստախանովականը
 մեկ ազրեդատի վրա, հարկավոր և վերա-
 վախել վողջ տեխնոլոգիական պրոցեսը և
 թիչ բան չի հարկավոր վերակա, ուցել բուն
 իսկ գործարանների աշխատանքում՝ նեղ
 տեղերը լցնելու, հետ մնացող բնադա-
 վառները առաջավորների պահանջներին
 հասցնելու ուղղութիւնը:

Այժմ բաւարի համար պարզ է, վար արանա-
գրանքի հին նորմաներն անպակաս են: Ար-
անագրանքի այդ նորմաները ծիծաղելի չեն
գարձել, յերբ բանվորները միջանի անպակ-
սեղանանցում են գրանք: Հարց է ծագում,
թե մեզ ինչի՞ չեն պակաս այդպիսի նորմա-
ներ: Դրանք պակաս չեն մեզ: Այժմ գրանք
միայն կազմակերպում են աշխատանքը և վաճ
թե կազմակերպում: Արանագրանքն նորմա-
ները հարկաւոր է վերանայել անհա-
պաստանով, վար մենք չենք կարող առանց
գրանք պայքար մղել ինքնարժեքի ընդհանուր
համար: Առանց ինքնարժեքի ընդհանուր չի
կարելի ընդհանուր գները, իսկ գների ընդհա-
մը բանվորի աշխատանքարժէքը բարձրացնելու
ամենամիջոց, ամենապակաս ուղին է: Ահա թե
ինչու արանագրանքն նորմաները պակաս է
վերանայել՝ գրանք վարուչ չափով բարձրաց-
նելու ուղղութիւնով:

Մարտնչական շարժումն աշխատանքի
արանագրանքանութիւնը բարձրացնելու
ուղին է, եօան միջոցների և սպասման մ-

ժեն անասի առարկաների առատության ու-
ղին ե: Գներն ե՛լ ավելի իջեցնելու համար
պետք ե ունենալ, վորքան կարելի յե, շատ
մթերք ե ավելի ցածր լնքնարժեքով:

Կենտկոմի պլենումը վերջանալուց հետո
ժենք պետք ե դորժնական մեծ աշխատանք
կատարենք արդյունաբերության բոլոր
էջուղերում, ակնհայտ ե սկսելով աջն էջու-
ղերից, վորտեղ ստախանովյան շարժումն
ամենից ավելի յե անարածված ե վորտեղ
նորմաներն ամենից առաջ եյին շուռ տված:
Ակնհայտ ե, վոր ժենք կսկսենք արդյունա-
բերության աջն էջուղերից, վորտեղ մեզ
առանձնապես չի սահմանափակում հումքը ե
չկան աշխատանքի բարձր արտադրողակա-
նության դարգացումը դանդաղեցնող խո-
չընդոտներ:

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐՃՈՒՄԸ ՁԿՆՈՐՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ,
ՍՊԻՐՏԻ, ՁԵԹԻ ՑԵՎ ՄՆՆԴԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԱՅԼ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Նույնպիսի յերեւելթներ, վորոնց մասին
յե խոսեցի շաքարի արդյունաբերության

վերաբերյալ, գործաթյուն ունեն նաև սպիրտ
տե արդյունաբերության մեջ: Ահա, որինակ,
գենց յեփոզ ստախանավանդան ընկ, Տերե-
խովը, կարողացավ հասնել այն գործաթյան,
վոր մի հերթափոխում 3,5 ցիկլի փոխարեն
տալիս է հինգ ցիկլ: Նա մեքենայի պատւյան
արագացրել է ճիշտ կարգավորելով գոլորշու
ներմղումը և ճիշտ կարգավորելով ջերմաս-
տիճանը: Կապվելով շագակաթնայի բաժնի
հետ՝ նա կարողացավ հասնել այն բանին,
վոր շագակա ստախանի բարձրացման գրա-
ֆիկը և սպարամաների աշխատանքի գրա-
ֆիկը համապատասխանեն միմյանց:

Դրա շնորհիվ ընկ, Տերեխովը կարողա-
ցավ 40 տոկոսով ավելացնել գենց յեփոզ
սպիրտի կարողությունը: Յեթերեմովսկի
սպիրտի գործարանի թորող սպարամանի բան-
վորակները Բլինովան և Արամովան կարո-
ղալան 40 տոկոսով բարձրացնել սպարամանի
կարողությունը: Յեվ դա նոր առաջնակարգ
սպիրտի գործարանում, առանց վրեժե նոր
սարքավորում պահանջելու, նրանք 40 տո-

կոսով բարձրացրին ապարատի աշխատանքը :

Շատ կարևոր է նաև ածիկի գործարանի բանվոր ընկ . Սնտիֆեյեվի նվաճումը , վորը կարողանում է ածիկ պատրաստել վեց որում՝ սահմանված տասն որվա փոխարեն , բարձրացնելով ջրի ջերմաստիճանը , ավելի բարձրացնելով ածիկի շերտերը և որական յերկու-յերեք անգամ խառնելով ածիկը : Սպիրտի գործարանների ածիկի բաժինները նեղ տեղերից մեկն են հանդիսանում և ընկ . Սնտիֆեյեվի նվաճումը հնարավորություն է տալիս ընդարձակել շատ գործարանների արտադրական կարողությունը՝ առանց նոր հիմնական ներդրումների , հսկայական տրնտեսում է մտցնում արտադրության մեջ և հիմնական ներդրումներում տնտեսումը բազմամիլիոն է :

Սակայն , ընկերներ , այդ ամենը դեռ սպիրտի թուր գործարանների սեփականությունը չի դարձել :

Սպիրտի ծրագիրը մենք ընդհանուր առ-

մամբ գերակատարում ենք: Բայց կան չատ
գործարաններ, վորոնք դեռ հետ են մնում,
գերի յեն պահպանողականությանը: Ստա-
խանովական ընկեր Արտյոմովը «Գլավտելի-
տի» կողմից ուղարկվեց Կուրսկի մարզի
Մորչնեվյան գործարանը, վորի տարեկան
ծրագիրը կազմում է 218 հազար գեկալիտր
և առ 10-ն գեկտեմբերի պլանը կատարված
է միայն 114.000 գեկալիտրի չափով: Գոր-
ծարանն ունենալով որակյան հազար գեկա-
լիտրի կարողություն՝ առաջին կիսամյա-
կում տալիս էր որակյան 300 գեկալիտր,
յերկրորդ կիսամյակում՝ 670 գեկալիտր:
Գործարանում յաւրաքանչյուր շաղախ յեփ-
վում էր յերկու ժամ 20 բոպեյում: Այժմ,
ընկ. Արտյոմովի գալուց հետո, շաղախը
յեփվում է մի ժամ 10 բոպեյից մինչև մի
ժամ 30 բոպեյում և գործարանն սկսեց գե-
րակատարել որակյան նորման: Ահա Դիմիտ-
րովսկի գործարանը (Մոսկվայի տրեստի):
Նա որակյան տալիս է վեց շաղախ, իսկ
պետք է տա 9 շաղախ: Սպիրտի արդյունա-

բերության մեջ մեր առաջին ստախանովական
ընկ. Տերեխովը, վորին «Գլավսպիրտն» այն-
տեղ և ուղարկել տեսնելու, թե ինչո՞ւմ և
բանը, հաղորդում և, վոր հանձն և առնում
այդ գործարանում տալ որական վոչ թե
9-ը, այլ 12 չաղախ:

Աղի արդյունաբերությունը, ստախանով-
յան շարժման դարդացման շնորհիվ, դառնի-
որեն բարձրացրեց արտադրողականություն-
ը: Աղադործների մեջ ստախանովյան շարժ-
ման նախաձեռնող ընկ. Պիսարենկոն սկսել և
փորել մինչև 440 մետր, նորմայով սահման-
ված 114 մետրի փոխարեն, չորս անգամ
բարձրացնելով արտադրողականությունը:

Բամբակի սերմ վերամշակող ձեթի ար-
դյունաբերության մեջ մամլիչի մի ժամվա
չրջանառությունը յերեքից 3,5-ի հասցնելը
հնարավորություն տվեց Միջին Ասիայում
բամբակի սերմերի վերամշակումն ավելաց-
նել 60.000 տոննով, վոր չափազանց կարևոր
և ներկայումս, յերբ հումքի այդ տեսակի
ավելցուկ կա: Արևածպղկի սերմի մամլիչ-

ների շրջանառությունը ևս հասցվեց յերկուսից յերեքի՝ մի ժամում :

Արևածաղիկը դեռ քիչ է : Ուստի արևածաղկի ձիթահան դործարանների համար այդ նվաճումը մեծ նշանակություն կունենա ապագայում , արևածաղկի բերքատվության աճման հետ միասին : Իսկ բամբակի սերմի համար մամլիչների շրջանառության այդ արագացումը հրատապ նշանակություն ունի : Նա ուղղակի փրկում է մեզ Միջին Ասիայում այժմ , յերբ բամբակի հրաշալի բերքըն այնքան շատ բամբակի սերմ է տալիս , վոր յեթե ստախանովականների նվաճումները չլինեյին , մենք չեյինք կարողանա Միջին Ասիայում մշակել ամբողջ հումքը : Ընդ իջրամովը միանգամայն ճիշտ հաղորդեց , վոր այս տարի միմիայն Ուզբեկստանը տալու յե ավելի քան 35 միլիոն փութ բամբակի հունդ : Չե՞ վոր բամբակի հումքի յերկու յերրորդ մասը հունդի ձևով հանձնվում է Սննդարդյունաբերության Ժողովրդական կոմիսարիատին՝ ձեթ արտադրելու համար ,

և միայն մի յերրորդ մասը վերադառնա-
թե՛լ հանձնվում է թեթև Արդյունաբերու-
թյան Ժողովրդական Կոմիտեի ատին: Ճիշտ
է, այդ մի յերրորդ մասն ավելի արժեքա-
վոր է, քան առաջին յերկու յերրորդը, սա-
կայն մեզ համար կարևոր էն վոչ միայն
բամբակեղեն գործվածքները, այլև բամբա-
կի հունդից ստացվող ձեթը՝ թե ոճառ և թե
մարդարին պատրաստելու համար:

Բեռլանի յեգիպտացորենի կոմբինատը, վո-
րը կառուցված է ամերիկյան գծադրերով,
վորն ունի արտասահմանյան սարքավորում,
հաշվված էր վերամշակելու որական 190
տոնն յեգիպտացորեն, իսկ այժմ վերամշա-
կում է 240 տոնն: Վերջերս ինձ մոտ մի քա-
նի լնկերներ յեկան այդ կոմբինատից՝ գի-
րեկտոր ընկ. Վուլֆը՝ լավագույն ստա-
խանավականների հետ միասին: Նրանք ա-
ռում են՝ թույլ տվեք մեզ 800 հազար ռուբ-
լի ծախսել, վորպեսզի վերադասավորենք
արտատները, տեղ-տեղ վերակառուցենք և
միջանի բան ավերացնենք, մենք կվերամշա-

կենք որակա՞ն մինչև 300 տոնն յեզիպտա-
ցորեն : Յեւ այդ կարելի յե անել, 800 հա-
զար ուրբով կարելի յե ավելացնել կոմքի-
նատի կարողությունը մոտ 50 տոկոսով՝
համեմատած նախագծված կարողության
հետ : Իսկ չե՞ վոր կոմքինատն արժե 18
միլիոն ուրբի :

Ստախանովականների այդպիսի նվաճում-
ները հսկայական նշանակություն ունեն,
մենք այդ բոլորը պետք է յուրացնենք և
ամբողջ թափով ծավալենք :

Ձկնարդյունաբերության ասպարեզում
ստախանովյան շարժումը մենք նախ և առաջ
պետք է դարգացնենք ծովային ձկնորսու-
թյան մեջ : Յեթե մենք դետերում ունենք
համեմատաբար սահմանափակ հումքային
ռեսուրսներ, թեպետ այդտեղ ել չոգտա-
դործված չատ հնարավորություններ կան,
այն չկա վոչ մի ոպորտունիստ, վորը հաս-
նի այնտեղ, վոր ասի, թե Բարենցովի
ծովում կամ Սադաղ ովկիմանտում
ձուկը պակաս է : Ծովերում իրոք անսահ-

ման, անսպառ քանակութեամբ ձուկ կա,
սկեռք ե միայն կարողանալ վորսալ: Յեւ
հրաշալի որինակներ կան թե ինչպէս կարե-
լի յե լավ վորսալ:

Մուրմանցիները հսկայական հաջողու-
թյուններ ունեն ձկնարդյունաբերութեան
զարգացման ասպարեզում: Սակայն յես վա-
խենում եմ, վոր չիլիի ընկեր մուրմանցիներ-
ը հանգստանան այդ հաջողությունների
վրա, մանավանդ, վոր նրանց հաջողու-
թյունները հարաբերական են: Նրանց նվա-
նումները հաջողություն են համարվում այն
սխառնառով, վոր առաջ նրանց մոտ գործը
շատ վատ էր, իսկ այժմ լավացել ե: Բայց
այն, ինչ վոր յերեկ լավ էր, այսօր արդեն
վատ ե, անբավարար:

Մուրմանցիներն այժմ տառեխի մեծ վը-
տառներ են սպասում: Անցյալ տարի միլիո-
նավոր ցենտներ տառեխ կար, ե մուրման-
ցիները շատ վորսացին ե այժմ սպասում են,
վոր տառեխը կմոտենա նույնպիսի վտառ-
ներով, այն ել անսպառման վորոշ ժամկե-

տում : Բայց չե վոր տառերը կարող ե նաե
խախտել գրաֆիկը : (Աշխուժություն դահ-
լիմում) :

Մուրմանցիներն սպասում են, փոխանակ
իրենց ջանքերը կենտրոնացնելու ուղղանա-
կիր նախատորմի վրա, վորն ամբողջ տարին
ձուկ ե վորսում : Իսկ մուրմանցիներն իրենց
աշխատանքի այդ մասը բաց թողին, և ահա
ուղղանակիր նավերը նրանց մոտ կանգնած
են նորոգման համար, փոխանակ ձողաձուկ
վորսալու :

Ուղղանակիր նախատորմում աշխատանքի
հիանալի որինակներ կան : Ահա, որինակ,
Ս. Մ. Կիրովի անվան ուղղանակիրը տվեց
36,000 ցենտներ ձուկ մի տարում : Իսկ
միջին հաշվով ուղղանակիրը տարե-
կան տալիս ե 17—18 հազար ցենտներ :
Այդպես ուրեմն, յեթե մեր բոլոր ուղղանա-
կիրները սկսեն տալ վոչ թե 17—18—ական
հազար ցենտներ, այլ 23—25—ական հազար
ցենտներ (առայթմ յես յուրաքանչյուր ուղ-
ղանակիրից 36,000 ցենտներ չեմ պահան-

2018) ; նախ քան թէ յայն պէնստդ յաւան-
 ակերտդ Կարօտանայնք զայն շնորհ մ-
 արացնել ձեռն վրա և ծրարով նախա-
 տեսանք թր թրժոյն ցնանայր փոխարէն
 Թաւաշայր յաւանակորնք Կարօտանայն-
 յն մալ 1, 2, 3 թրժոյն ցնանայր : Կրթութ մն-
 ձն յաւանակորր արնակն պետք և հա-
 վանարկն քորք յաւանակորնք, փոք-
 րակն շնորհաբք ձեռն քորք վրա հա-
 թար ծախարկ ինչպէս հարկն և :

Մեր Հեռավոր Սրեհեղբի & Ընտանիքը Թե՛
Կորսնորսական Ընտանիքը և Թե՛ Կե-
տանիք Ընտանիքային ընտանիքը,
աշխատանքի հրահանգի օրինակներ ունեն
Հեռավոր Սրեհեղբի & Ընտանիքային ընտանիք
շահույթի կորստի կորստի կորստի ընդ: Դե-
ռա-Հոսի փորձերն չեն չանցի անհրաժեշտը-
ված նրան համար, փոր իր կախումների նախա-
կառնությունը և նրան ընթացքում փորում
2131 ցեղանիք ձուլ, նորմալ անհատի-
ված 800 ցեղանիքի փորում:

Յարմարակներ համարներ հարմար

մի սեպտեմբեր միջին հաշվով կկազմի 1800
ցենտներ (նորմալից բարձր), իսկ կրաք-
վարացող «Լամազ» կավասակին (ավազ-
ընկ: Մագուրը) ավելց 2000 ցենտներ, այ-
սինքն գրանով նա հասավ ճապոնացի կրաք-
վարացողների լավ վարսի նորմալին: Դրժ-
բախտաբար Հեռավար Արեւելքի մեր ձկնորս-
ների մեծ մասը նույն ձկնորսական նավով
ավելի քիչ ձուկ է վարսում, քան ճապոնա-
ցիները: Դա ունի իր բացատրությունը:
Ճապոնացիները մեծացել են այդ ծովում,
նրանք ունեն աշխատանքի հին վարժա-
թյուն, իսկ Ռուսաց ավելի անոր միայն ա-
նունով է խաղաղ, նա այնպես է ցնցում,
ինչպես վաղ մի այլ ավելի անոր: (Դանի-
նում աշխուժություն):

Մեր ծովային-ձկնորսները նոր են միայն
վարժվում այդ ավելի անոր, կրաք վարա-
ցող նավերում եւ կան առանձին հիանալի
ձկնորսներ, վարձք ճապոնացիներից պա-
կաս չեն վարսում: Մակայն մենք
ձկնորսական բոլոր նավերի աշխատանքում
պետք է հասնենք ճապոնական նորմալին եւ

անցնենք նրանից : Նա տեխնիկական բարձ-
րագույն նորմա չի համարվում , բայց մենք
պետք է և կարող ենք գերադանցել այն :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՆԵՐԻ
ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ստատիստիկայի շարժումը շուտ է տալիս
վաղ միայն էին նորմաները , այլև արտա-
դրական պրոցեսների էին կազմակերպումը :
Նա պահանջում է վերականգնել արտա-
դրության ամբողջ ղեկավարումը :

Ահա Հեռավոր Արևելքի մի խումբ կոմյե-
րիստական նախապետներ ինձ նամակ են ու-
ղարկել , վերոյ նրանք պարտավորվում են
ամբողջ տարին ձուլվել վերստին , պայմանով ,
վեր ապահովվի աշխատանքի անհրաժեշտ
բաժանումը :

Հեռավոր Արևելքի այդ յերիտասարդ
չկիպերներն իրենց նամակում ասում են
ձուլվել վերստին և ևս , մենք այդ ձուլվել
ուղևանով տանում ենք ափ , ապա նորից ծով
վերադառնում , այսինքն ժամանակ ենք կոր-

ցնում, վորի ընթացքում կարող էյինք նոր
վորս կատարել: Յեկեք, — գրում են նրանք,
— այսպես անենք: մենք վորսում ենք,
մյուսները նոր ուսկաններ են բերում մեզ,
տանում են և մաքրում են ձուկը, իսկ մենք
միայն ձուկ կվորսանք:

Դա ճիշտ և շատ հետաքրքիր առաջարկ
է: Մենք ունենք սեղոնային անփորձ շատ
բանվորներ, վորոնք հեշտությամբ գլուխ
կրերեն հասարակ աշխատանքը: Իսկ մշտա-
կան փորձված ձկնորսները քիչ են: Ուստի
առանձնապես կարևոր է դատախարակել ի-
րենց գործի, թեկուզ վաչ շատ մեծ թվով,
վարպետներ, վորոնք ունենան այդպիսի աշ-
խատանք կատարող քիչ վորակյալ ոգնա-
կաններ՝ ոժանդակ աշխատանք կատարելու
համար: Աշխատանքի ու արտադրության
այդ նոր կազմակերպումը մենք պետք է
կիրառենք:

Ստախանովյան շարժումն արտադրու-
թյան նոր կազմակերպում է պահանջում մեզ

միայն ձկնորդ-յուսնաբերության մեջ, այլև
բոլոր գործարաններում :

Ահա Դոնբասի ընկերները, վորոնք տվին
ստախանովյան շարժման առաջին ազդանշա-
նը, այժմ տալիս են յերկրորդ ազդանշա-
նը : Նրանք ասում են, թե քիչ և բարձրա-
ցնել առանձին բանվորի աշխատանքի
արտադրողականությունը, սկսած և արտա-
դրությունը կազմակերպել այլ ձևով՝ ստա-
խանովարար, աշխատանքը սկսած և նախա-
պես պատրաստել, վորպեսզի արտադրու-
թյունն սկսվելուց առաջ ամեն ինչ պատ-
րաստ լինի, վոր լինեն կիսաաֆարրիկատ,
նյութեր, վոր գործիքները կարգի բերված
լինեն :

Այժմ նորոգումը ևս սկսած և կատարել
նոր ձևով : Սարքավորումն ավելի արագ և
պտտվում, ավելի յե աշխատում : Պետք և
ավելի խնամել սարքավորումը :

Հետևաբար, մենք սկսած և ավելի կանո-
նավորենք նորոգման գործը : Նորոգող բան-
վորները մեզ մոտ սխալ են վարձատրվում՝

յեթե ավելի յեն նորոգում, ավելի յեն
վաստակում, իսկ յեթե քիչ են նորոգում,
քիչ են վաստակում, կարծես ճիշտ է: Իսկ
յես կարծում եմ, վոր ավելի ճիշտ կլինի,
յեթե նորոգող բանվորների վարձատրու-
աշխատում սարքավորումը առանց նորոգ-
ված սարքավորման աշխատանքի տեղում
թյունից ու վորակից: Վորքան յերկար է
աշխատում սարքավորումը, առանց նորոգ-
ման, այնքան ավելի ռոճիկ է ստանում այդ
սարքավորումը նորոգող բանվորը: Պետք է
այսպիսի կարգ մտցնել. յեթե սարքավորու-
մը վորոշ ժամկետից հետո նորոգման չու-
ղարկվի, յեթե նա լավ է աշխատում, ապա
նորոգող բանվորը դրա համար պարգև է
ստանում: Այն ժամանակ մեզ մոտ ավելի
մեծ շահագրգռվածություն կլինի, վոր սար-
քավորումն աշխատի առանց լրացուցիչ
նորոգման, վոր նորոգման վորակը բարձր
լինի:

Ստախանովյան շարժումը վոչ միայն
չուռ տվեց հին նորմաները, այլև բանվոր-

ների մասսայական չարժուամբ զարթեցրեց
ռացիոնալացման ու գյուտարարութեան աս-
պարեզում: Այժմ ուղղակի յուրաքանչյուր
գործարանում ամեն մի բանվոր մտածում
է, թե արդյոք ի՞նչը փոխի իր աշխատան-
քում՝ արտադրողականութիւնը բարձրա-
ցնելու համար: Մտցվում են հազարավոր
նոր առաջարկներ: Յեռ վերհիշում եմ այն
ժամանակը, յերբ մոտ չորս տարի առաջ,
ցանկանալով զարգացնել ռացիոնալացման
գործը, յուրաքանչյուր ժողովոմատում, յու-
րաքանչյուր գլխավոր վարչութեան մեջ,
յուրաքանչյուր տրեստում և ձեռնարկու-
թեան մեջ ստեղծվեցին ռացիոնալացման
հատուկ բյուրոներ: Ստեղծվեցին հատուկ
բյուրոներ, իսկ նրանք ռացիոնալացնե-
լին գլխավորապէս թղթի վրա:

Գրվեցին կանոնադրութիւններ, նապա
կանոնադրութիւնների վերաբերյալ հրա-
հանգներ, ու դրանից վոչինչ դուրս չեկավ:
Յերկու տարի առաջ մենք փակեցինք այդ
բյուրոները: Իսկ այժմ գոյութիւն ունի

ստախանովականների մասսայական շար-
ժում, բանվորների բազմամիլիոն մասսա-
ներն ամեն տեսակ բյուրոյից շատ ավելի
լավ են ռացիոնալացնում: Այժմ ձեռնարկու-
թյուններում մենք ունենք ռացիոնալացման
մասսայական ձեռնարկումներ, վորոնք
պետք է իրագործենք, ընդհանրացնենք,
ռադադործենք:

ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐՇՄԱՆ
ԱՌԱՆՋՆԱԶՍՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՐԴՅՈՒԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՍԵՋՈՆԱ ԻՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ

Պետք է խոսել սննդարդյունաբերության
մեջ ստախանովյան շարժման ունեցած մի-
ջանի առանձնահատկությունների մասին:
Այդ առանձնահատկությունները կապված
են այն հանգամանքի հետ, վոր մեզ մոտ
արդյունաբերության մի շարք ճյուղեր աշ-
խատում են սեղոնային յեղանակով:

Իսկ մեզ մոտ կան արդյունաբերության
այնպիսի ճյուղեր, վորտեղ արտադրու-

թյունն ընդմիջվում է : Որինակ՝ շաքարի
արդյունաբերության մեջ բանվորն աշխա-
տում է 100—150 ուր, իսկ հետո գործարանի
նորոգման համար մնում է բանվորների մի-
այն մի յերրորդը, մյուսները գնում են մին-
չև հաջորդ սեզոնի սկիզբը : Նույնը ձկնար-
դյունաբերության մեջ. ձմեռը քիչ են վոր-
սում, ամառը՝ շատ, իսկ ավերորդ բանվոր-
ներին ձմեռը բաց են թողնում : Դրանից են
բղխում տեխնիկային տիրապետելու դժվա-
րությունները և սեզոնային բանվորին
հատուկ մոտեցում ցուցաբերելու անհրա-
ժեշտությունը :

Ստախանովյան շարժումն այստեղ էլ
փրկում է մեղ : Փոխանակ սեզոնի յեռուղե-
ուն մեծ թվով բանվորներ վերցնելու, վո-
րոնց դժվար է գտնել և դժվար է պահել,
վորովհետև բնակարանները հերիք չեն դա-
լիս, կարելի չե կառավարվել ավելի սակա-
վաթիվ բանվորներով, պայմանով, վոր
նրանք ավելի շատ արտադրանք տան : Ստա-
խանովյան շարժումը աշխատանքի նիշտ

բաժանում և մտցնում արտադրության մեջ,
հիմնական բանվորին ազատում և հասարակ,
վոչ-վորակյալ աշխատանքից: Այդ մեղ
թույլ և տալիս սեղոնում համաքաղաքել մի-
այն վոչ-վորակյալ բանվորներ, վորոնք
կարճ ժամանակամիջոցում կարող են յու-
րացնել իրենց վոչ բարդ գործը: Աշնանը մի
կոմբինատներում, որինակ, մորթեղենի
պակաս և զգացվում: Ամառը մենք նրանց
սլահում ենք զանազան ոժանդակ աշխա-
տանքներ տալով, վորպեսզի աշնանը չկոր-
ցնենք նրանց: Այժմ մորթողներն ապում են՝
տվեք մեղ յերկու մորթողի փոխարեն մի
վոչ-վորակյալ ոգնական՝ ոժանդակ աշխա-
տանքի համար, և մենք կտանք յերկու մոր-
թողի արտադրանք: Ուստի, ունենալով այն-
պիսի ստախանովական մորթող, վորը կա-
րող և փոխարինել յերկու մորթողի, մենք
կարող ենք այդ մեկ մորթողին հաստիքում
պահել, վորպեսզի նա արտադրությունից
դուրս չգա, իսկ սեղոնի յեռուզեռի պահին
ոգնական վերցնել նրա համար:

Շաքարի արդյունաբերությունն և յական

արդյունքներ ձեռք բերեց բանվորների հո-
սունության դեմ մղվող պայքարում, թե-
պետ նա սեզոնային արդյունաբերություն է:
Շաքարի գործարանները կոլտնտեսություն-
ների ու կոլտնտեսականների հետ այնպիսի
հարաբերություններ ունեն, վոր սեզոնային
չաքարագործ բանվորների 90—95 տոկոսը
հաջորդ սեզոնում կոլտնտեսություններից
վերադառնում է նույն գործարանը: Շատ են
չաքարագործ այնպիսի բանվորներ, վորոնք
15—20 տարվա ընթացքում ամեն ձմեռ
դնում են, իսկ աշնանը նորից վերադառնում
են նույն գործարանը և աշխատում են
նույն ագրեգատի վրա: Այդ հեշտությամբ
կարող ենք մենք ապահովել միայն այնտեղ,
վորտեղ բանվորները սեզոնային ձեռնար-
կություններից հեռու չեն ապրում, սակայն
այդ ավելի դժվար է անել, որինակ, Հեռա-
վոր Արևելքի ձկնորսարաններում: Ուստի
հեռավոր վայրերում ավելի շատ հոգատա-
րություն պետք է ցուցաբերվի մարդկանց,
այնտեղ անհրաժեշտ է հաստուկ միջոցա-

ռումներ կիրառել՝ բանվորներին տեղին ամ-
րացնելու համար :

Մի քանի ձեռնարկություններում մենք
աշխատում ենք, վոր բանվորները յերկու
պրոֆեսիա ունենան : Ասենք՝ մսի ու գարե-
ջրի արդյունաբերության մեջ սեղոնի յեռու-
ղեւը չի գուգադիպում, և ահա բանվորն ա-
մառն աշխատում է գարեջրի գործարանում,
իսկ ձմեռը և աշնանը՝ մսի կոմբինատում :

Մի գործարանը պետք է գործակցի մյու-
սի հետ, վորպեսզի գործարանի բանվոր-
ների մի մասը մեր մի գործարանից անցնի
մյուս գործարանը : Ահա այդպիսի միջոցա-
ռումներով մենք կարող ենք ապահովել այն-
պիսի դրություն, վոր վորակյալ բանվոր-
ները չգնան, այլ մնան ձեռնարկություն-
ներում և բարձրացնեն իրենց վորակավո-
րումը :

Պետք է մի բան ևս անել՝ համակցել ար-
տադրությունը : Որինակ, մրգի կոնսերվի
գործարանները աշխատանքն ավարտում են
հոկտեմբերին, մինչև մրգի նոր բերքը :

Վո՞րտեղ ոգտագործենք բանվորներին, վոր
 չկորցնենք նրանց տվյալ արտադրության
 համար: Մենք մտադիր ենք կառուցել հա-
 մալցված արտադրություն, որինակ՝
 կոնսերվի գործարանում կադմակերպել հը-
 րուշակային արտադրություն: Թող նա այն-
 քան ել մեքենայացված չլինի, բայց դրա
 փոխարեն բանվորները պարապուրդ չեն
 ունենա, կադրերը կպահպանվեն: Պահածո-
 ների արտադրության ընդմիջման չըջանում
 մենք կպատրաստենք կոնֆետներ, հալվա,
 ռահաթ-լոխում և այլ քաղցրեղեն, վորոնք
 հարկավոր են և վորոնք կարելի չե պատ-
 րաստել: Այդ վերաբերում ե նաև արդյու-
 նաբերության մյուս շատ ճյուղերին, այն
 ել վոչ միայն սննդարդյունաբերության:

ԲԱՎՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
 ՄԱԿԱՐԴՈՒԿ ՄՈՏԵՑՆԵԼ ԻՆԺԵՆԵՐՆԵՐԻ ՈՒ
 ՏԵԽՆԻԿՆԵՐԻ ՄՍԿԱՐԴԱԿԻՆ

Ընկեր Ստալինն ստախանովականների
 առաջին խորհրդակցությանն իր արտապա-

Իսկ ճանաչում մեզ տվեց մտավոր ու Ֆիզիկա-
կան աշխատանքի խզումը վերացնելու մե-
ծագույն հեռանկար: Ընկեր Ստալինը ցույց
տվեց, վոր մեր բանվորների կուլտուրա-
կան-տեխնիկական աճումը կարող է և պետք
է նրանց բարձրացնել ինժեներ-տեխնիկական
աշխատողների մակարդակին: Այդ հրաշալի
ճանապարհը բաց է մեր յերկրի աշխատա-
վորության ամբողջ բազմամիլիոն մաս-
սայի համար: Այդտեղ դրսևորվում է մեր
տարբերությունը կապիտալիստական աշ-
խարհից: Այժմ և՛ յերիտասարդները, և՛ հա-
սակավորները սովորում են և սովորելու ու
սովորելու յեն:

Դա հիանալի շարժում է: Անտաբակույս,
աշխարհումս վոչ մի տեղ չկան այնքան սո-
վորողներ, վորքան սովորում են մեզ մոտ
դանադան խմբակներում, դպրոցներում,
բարձրագույն ուսումնական հաստատու-
թյուններում: Մենք պետք է ամբողջ լայ-
նությամբ ծավալենք ուսուցումը:

Մենք վորոշել ենք սննդարդյունաբերու-

Թյան մեջ գործը կազմակերպել այնպես ,
վոր 1936 թվականին բոլոր բանվորներն
անցնեն տեխնիկական միջնակարգ : Մի յեր-
րորդն արդեն անցել է : Հարկավոր է նաև
սեզոնային բանվորների մի մասը պատ-
րաստել , սովորեցնել :

Այժմ հարցն այն բանվորների մասին է ,
վորոնք արդեն տեխնիկական քննություն են
տվել . ի՞նչ անենք նրանց : Յես կարծում եմ ,
թե ով առաջին քննությունը տվել է , նրա
համար հարկավոր է մշակել մի այլ , տվելի
բարձր ծրագիր , յերկրորդ աստիճանի ծրա-
գիր : Ապագայում անշուշտ կարիք կլինի
ստեղծել նաև տեխնիկական կրթության
յերրորդ աստիճանը , վորը սովորողներին
արդեն կմոտեցնի ինժեներների ու տեխնիկ-
ների մակարդակին :

Մեզ համար չափազանց կարևոր է նաև
աշխատել մեր ինժեներներին ու տեխնիկներին
վերավորակավորման վրա : Դեռ քիչ է , յե-
թե ինժեներն ավարտել է իր ուսումը : Յե-
թե նա՝ ինժեները , շատ տարիների ընթաց-

քում, դրահանությունն չի կարգում, յեթե
 նա մյուսաների հետ չի փոխանակում իր փոր-
 ճը, ապա այդպիսի ինժեները կարող ե հետ
 մնալ և արտադրության մեջ ռեակցիոն
 մարդ հանդիսանալ: Ինչպես կարմիր բանա-
 կում, այնպես ել արդյունաբերության
 մեջ, անհրաժեշտ ե ինժեներներին, տեխնիկ-
 ներին, դիրեկտորներին մշտական կատարելա-
 դործում, տեխնիկական մշտական վերավո-
 րակավորում, վորպեսզի նրանք հետ չմնան
 ստախանովականներից և ավելի լավ դեկա-
 վարեն նրանց: Ահա թե ինչու ամբողջ թա-
 փով պետք ե ծավալել ինժեներ-տեխնիկա-
 կան կազմի վերապատրաստման աշխատան-
 քը:

ԱՆԴԱԴՐ ԲԱՐԵԼԱՎԵԼ ՍՆՆԴԱՍԹԵՐՔՆԵՐԻ ԱՍՈՐՏԻՍԵՆՏՆ ՈՒ ՎՈՐԱԿԸ

Ստախանովյան շարժումը հատուկ խնդիր-
 ներ ե դնում սննդարդյունաբերության ա-
 ռաջ: Մեզ, ավելի քան վորևե ուրիշի, ըն-
 կերներ, կարևոր ե վոչ միայն ավելացնել

մթերքների քանակը, այլև բարեւաւել նրանց
վորակը: Յեթե մեր ստախանովականներն
արվելացնեյին միայն քանակը, առանց բա-
րեւաւելու վորակը, աստա այդպիսի ստախա-
նովյան շարժում մեզ պետք չեր լինի: Մը-
թերքների վորակը, նրանց սննդարար հատ-
կություններն ու համը, փաթեթումը, հըս-
կայական նշանակություն ունեն սննդար-
դյունարեւության համար:

Ընկեր Ստալինը մեզ շատ ոգնեց նրանով,
վոր իր քննադատությամբ, իր ցուցումնե-
րով հուպ եր տալիս, վորպեսզի մենք շուտ
բարեւաւենք մթերքների վորակը: Մենք,
ընկերներ, շատ հաջողություններ ենք ձեռք
բերել, սակայն, յեթե սննդարդյունարեւու-
թյան աշխատողներից վորևէ մեկն ասի, թե
ամեն ինչ արել ենք, կսխալվի, և վր'չ մի-
այն կսխալվի, այլև կտապալվի: Մենք
վարժվել եյինք, վոր մեզ մոտ մթերքները
վատ և քիչ են յեղել: Այժմ մթերքները շա-
տապել են և նրանք բարձրորակ են: Սա-
կայն մարդիկ աճում են, նրանց ախորժա-

կը մեծանում է, ավելանում են նրանց պահանջները, զարգանում է նրանց ճաշակը և սննդարդյունաբերությունը պետք է ընդառաջի աշխատավորների հարածուն ճաշակին ու պահանջներին: Իսկ աշխատավորները մեզ մոտ չեն վոր աշխատում են միայն սկըսում, ինչպես հարկն է, սնվել և համեղ բան ուտել: Վերջերս Միխայիլ Կոլցովը «Պրավդա»-յում գրել էր, թե ինչպես են ուտում դանիացիք: Յես կարդում ու զարմանում եյի. անհավատարի յե: Բայց քանի վոր գրում է ընկ. Կոլցովը, այն ել «Պրավդա»-յում, նշանակում է ճիշտ է: (Հավանություն աղմուկ):

Այդ հողվածում ընկեր Կոլցովը պատմում է, թե ինչպես Դանիայում ուտում են այնպես, վոր կարծես ծես են կատարում՝ շատ տեսակ ճաշեր, հսկայական ընտրություն, վոչ թե ճաշ, այլ կրոնական արարողություն:

Մեր յերկիրը հարստանում է, և շուտով մենք ամեն ինչ առատ ենք ունենալու միլիո-

նաՎորների համար : Այն ժամանակ թեպետ ,
իհարկե , դանիացիների նման մենք ուտելը
սրբազան արարողության չենք վերածի ,
բայց , համենայն դեպս , կուտենք ճաշակով
ու համով : Ուտի , սննդարդյունաբերու-
թյունը պետք է տա այնպիսի մթերքներ ,
այնպիսի վորակով , վոր դրանք բավակա-
նությամբ ուտեն վոչ միայն նրանք , ովքեր
սոված են , այլև նրանք , ովքեր կուշտ են :
Կոսիոր .— Ուտել չես ուզում , բայց ու-
տում ես :

Միկոյան .— Ճիշտ է , պետք է այնքան հա-
մեղ , այնքան սննդարար ու հաճելի լինի ,
վոր «ինքը բերանդ մտնի» :

Պիտակը և փաթեթումը պետք է գեղեցիկ
լինի : Գեղեցիկ պիտակը , գեղեցիկ արտաքի-
նը լավ է անդրադառնում համի վրա : Լավ
փաթեթված մթերքը բոլորովին այլ վերա-
բերմունքի յե արժանանում :

Ձայներ ,— Ճիշտ է :

Միկոյան .— Սպառողը տեսնում է լավ
փաթեթումը և դեռ նրա վորակը չփորձած
տեսնում է՝ «յերևի հրաշալի մթերք է . . .» :

Բացի դրանից փաթեթումը պահպանում է մթերքը խոնավությունից, չորությունից, փչանալուց: Ուստի փաթեթումը չափազանց կարևոր է: Այժմ մենք մեր մի խումբ աշխատողներին ուղարկեցինք Ամերիկա և Յեյլ-ըոպա, վոր այնտեղ սովորեն, դիտեն ամեն ինչ, այնտեղ յեղած ամեն լավ բան, վորպեսզի մեզ մոտ ել մտցնենք: Ապրանքների մեր ասորտիմենտը լավ է, բայց համեմատած Ամերիկայի հետ՝ բավականաչափ ճոխ չե, այնքան ճոխ չե, վորքան հարկավոր է մեզ: Մեզ հարկավոր է, վոր մթերք չատ լինի, վոր նրա վորակը գերազանց լինի, վոր ասորտիմենտը ճոխ լինի:

Արդյունաբերության այն ճյուղերում, վորտեղ սպառման դժվարություններ կան, պետք է ստախանովականներին ուղղակի ասել՝ ձեր խնդիրն է այնպես բարելավել ասորտիմենտը, այնպես բարելավել վորակը, փաթեթումը, արտաքին տեսքը, վոր ապրանքը տարածվի...

Կոսիոր.— Այն ել հարմար գնով:

Միկոյան .— Այդ մենք գիտենք, ընկ. Կո-
սիոր: Ընկեր Ստալինը վերջերս առաջարկեց
իջեցնել շաքարի ու կոնֆետների գները:
Մենք մեծ ուրախությամբ արինք այդ:
Տվյալ շրջանում կոնֆետի գներն, ինչպես
ասում են, անաստված չեն: (Ծիծաղ, ծա-
փահարություններ):

Մենք գներն իջեցրել ենք և ավելի յենք
իջեցնելու, իսկ վորակը բարելավելու յենք:

Ընկեր Ստալինն ասաց, վոր ստախանով-
յան շարժումը ճանապարհ ե հարթում մը-
թերքների առատության համար: Հետևա-
բար, հարկավոր ե ավելի ու ավելի ծավալել
ստախանովյան շարժումը: Վոմանք հարց են
տալիս՝ ի՞նչպես ոգտագործենք ավելորդ
բանվորներին: Դրան կարելի յե պարզ պա-
տասխան տալ. մենք այնպիսի ծրագիր կը-
տանք, վոր մեզ մոտ բոլորն ել կաշխատեն:
Կգնենք նոր հաստոցներ, նոր ագրեգատներ,
«կկարենք» նեղ տեղերը, աշխատի՛ր վորքան
ուզես, աշխատանք կգտնվի, դրա մասին
չե խոսքը, միայն թե ավելի շատ մթերք
արտադրի՛ր:

Պետք է ավելի արագ տեսնել վերցնել և մենք այժմ կվերցնենք: Այն, ինչ վոր անցյալ տարի հաղիվ հասանելի յեր համարվում, այժմ բոլորովին հեշտ է դառնում: Ընկերներ, հսկայական չափով արագացել և մեր շարժումը: Իհարկե, սննդարդյունաբերությունը չի կարող չափվել ծանր արդյունաբերության հետ: Ծանր արդյունաբերությունը սննդարդյունաբերությունից ավելի լավ է զինված, այնտեղ կադրերն ավելի վորակյալ են: Սակայն սննդարդյունաբերության մեջ ևս վերջին յերկու տարում հսկայական աճում կա, վոր առաջ գոյություն չուներ:

Այս յերկու տարվա ընթացքում մենք սննդարդյունաբերության արտադրանքը բարձրացրինք 57 տոկոսով: Յեթե դրան ավելացնենք 1936 թվականի ծրագիրը, ապա յերեք տարվա աճումը կկազմի 94 տոկոս, — յերեք տարում համարյա կրկնապատկված է: Քիչ թե շատ տանելի աճում, բայց դա անտարակույս դեռ սահման չե, դեռ մեծ

ուեղերվներ կան : Ավելի լավ կաշխատենք ,
մոբիլիզացիայի կենթարկվենք 1936 թվականի
ծրագիրը գերակատարելու համար , վո-
րի ընթացքում մենք պետք է հասնենք ար-
տադրության առնվազն 22 տոկոս աճման՝
համեմատած 1935 թվականի հետ :

Հոլնվարի մեկն այժմ տոն է : Առաջ այդ-
որը մենք չեյինք տոնում , իսկ այժմ տոնե-
լու յենք ինչպես հարկն է : Իսկ Հոլնվարի
յերկուսից իսկական պայքար կսկսենք 1936
թվականի ծրագիրը կատարելու համար և
անպայման կկատարենք այդ ծրագիրը :

* *
*

Յես արդեն խոսեցի մեր շարժման արա-
գացման մասին : Այժմ մենք բոլորս ել տես-
նում ենք այդ , և մենք՝ ղեկավարներս և բո-
լոր բանվորները , ամբողջ ժողովուրդը տես-
նում է , վոր հասել է մեր զարգացման հըս-
կայական արագացումը :

Իսկ ընկ . Ստալինն իր ամբողջ հանճարե-
ղությամբ նախագուշակեց այդ այն ժամա-

նաեղ, յերբ դեռևս վոչվոք թերևս չեր մտա-
ծում ու չեր նախատեսում այդ:

Ընկ. Ստալինը 1931 թվականին հանդես
գալով տնտեսավարների խորհրդակցությա-
նը, տվեց իր հռչակավոր վեց պայմանները:
Հստ եյության ընկեր Ստալինի այդ վեց
պայմանները հանդիսացան ստախանովյան
շարժման զարգացման վեց պայմաններ, վեց
նախադրյալներ: Յերբ կարդում ես մեր Ստա-
լինի ճառը՝ վեց պայմանների մասին, տես-
նում ես հենց այն, ինչ վոր տվեց մեզ, ինչ
վոր նախապատրաստեց ստախանովյան շար-
ժումը: Այդ պայմանների կատարմամբ մենք
նախապատրաստեցինք ստախանովյան շար-
ժումը:

Իսկ 1933 թվականին տալով առաջին հըն-
գամյակի հանրագումարները, ընկ. Ստալինը
նախագոչակեց այն արագացումը, վորն ու-
նենք մենք այսօր: Նա ուղղակի, որացուցա-
յին ճշգրտությամբ նախագոչակեց, վոր
հենց հիմա, այս ուրերին մենք կարագաց-
նենք մեր զարգացումը: Կյանքը ցույց տվեց

ընկեր Ստալինի այդ կանխատեսման ամբողջ
հանճարեղությունը:

Յերբ կրկին անգամ կարդում ես Մարքսը-
Ենգելսը-Լենինը-Ստալինը, միշտ վորևե
նոր բան ես գտնում նրանց մեջ, վոր առաջ
կարծես չեյիր նկատել: Ձե՞ վոր յերբ կար-
դում ես, սովորաբար պատասխան ես փնըտ-
ում արդեն հասունացած հարցին: Փնտռում
և գտնում ես: Իսկ այն, ինչ վոր չես փնտ-
ռում, անցնում ե գիտակցությանդ կողքով,
չի նկատվում:

Յես պետք ե ուղղակի խոստովանեմ. ընկ.
Ստալինի՝ առաջին հնգամյակի արդյունքնե-
րին վերաբերյալ ճառը յես լսել եմ, միջանի
անգամ կարդացել եմ և հենց նորերս կրկին
անգամ կարդալով՝ հանդիպեցի մի տեղի,
վորը մենք բոլորս ել քիչ ենք մեջբերում և
վորը յերևի քիչ գիտենք:

Ահա ընկեր Ստալինն ասել ե, թե շինա-
րարության պաթոսը պետք ե լրացնել նոր
տեխնիկայի յուրացման պաթոսով: Այդ բո-
լորս ել յուրացրել ենք և ասում ենք—հրա-

շալի խոսքեր են : Այդ վոսչի խոսքերն այժմ
բոլորի բերանումն են : Վոչովհետև ներկա-
յիս ստախանովյան շարժումը նոր տեխնի-
կայի յուրացման իսկական պաթոսն է : Բայց
ահա հենց նույն տեղում ընկեր Ստալինի
մոտ յերկու տող ցածր, ավելի շատ բան է
ասված, վորից սովորաբար մեջբերում չենք
անում :

Ահա թե ինչ է ասել ընկ. Ստալինն առա-
ջին հնգամյակի արդյունքների մասին 1933
թվին :

«Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում
մենք կարողացանք կադմակերպել նոր շինա-
րարության խանդավառությունը, պաթոսը
և վճռողական հաջողություններ ձեռք բե-
րինք : Այդ շատ լավ է : Բայց այժմ այդ քիչ
է : Այժմ այդ գործը մենք պետք է լրացնենք
նոր գործարանների ու նոր տեխնիկայի յու-
րացման խանդավառությամբ, պաթոսով,
աշխատանքի արտադրողականության լուրջ
բարձրացումով, ինքնարժեքի լուրջ կրճա-
տումով :

Այդ և այժմ գլխավորը :

Վորովհետև միմիայն այդ բազայի վրա կարող ենք մենք հասնել այն բանին, վոր, ասենք, յերկրորդ հնգամյակի յերկրորդ կեսում նոր հզոր զուգաշենք թե՛ շինարարության բնագավառում և թե՛ արդյունաբերական արտադրանքի աճի բնագավառում» :

Սա ուղղակի հանճարեղ մարդարեւություն է : Այս նախատեսումն այնքան ճշգրիտ է, վորպիսին նույնիսկ դժվար է սպասել :

Յեւ, ահա, ընկերներ, յերբ այդպիսի բաներ ես կարդում Մարքսի ու Ենգելսի, Լենինի-Ստալինի գրվածքներում, ապա տեսնում ես, վոր նրանց ստեղծագործություններն այնպիսի դանձեր են, մտքի այնպիսի հարստություն, վոր վորքան ել կարդաս, չես սպառի, նայեա, ինչպես յերբեք վոչ մի յերկրաբան իր հետախուզումներով չի սպառի մեր յերկրի մեծ հարստությունները :

Հենց մեր զարգացման այդ արագացումը, վոր նախագուշակել եր ընկեր Ստալինը,

ապրում ենք այժմ մենք: (Ծափահարու-
թյուններ): Նա արդեն իրականացավ:

Այժմ մենք, ամբողջ յերկիրը, ինչպես
ասում ե մեր Ստալինը, նոր, հզոր քափ
վերցրինք: Առաջիկա տարվա հիմնական
ծախսերի համար մենք 1935 թվականի 25
միլիարդ ռուբլու փոխարեն 1936 թվականին
ունենալու ենք 32 միլիարդ ռուբլի: Հենց
դա յե շինարարության նոր, հզոր թափը,
արտադրանքի 23—25 տոկոսով աճման ըն-
դարձակ ծրագիրը: Այդ ընդունված ե ա-
ռաջիկա տարվա համար, ընդվորում, ըն-
կերնե՛ր, դրանք արդեն այն տոկոսները չեն,
վոր ունեյինք մենք առաջ: Այժմ յուրաքան-
չյուր տոկոս ավելի յե կշռում, քան առաջ,
չա՛տ ավելի, քան առաջ:

Մեր յերկիրը, ահա արդեն 18 տարի յն,
աշխարհումս առաջինն ե իր քաղաքական
կաջգով: Շուտով նա առաջինը կլինի իր ա-
ռատությամբ, հարստությամբ, հզորու-
թյամբ և կուլտուրայով:


«Ով ում» հարցը, վոր արդեն վաղուց ե

լուծվել մեր յերկրում, ընկ. Ստալինի
ղեկավարութեամբ նույնպիսի հաջողու-
թեամբ կ'լուծվի հողուտ մեզ, հողուտ կո-
մունիզմի, նաև միջազգային ասպարեզում:
(Յերկարատև ծափահարություններ: Բոլո-
րը վոտֆի յեն կանգնում):

Խմբագիր Տ. Խորունի
Թարգմ. Հ. Թուրշյան, կոնսր. սրբագր. Լ. Արովյան,
սրբագրիչ Վ. Զիդեղյան, տեխն. խմբ. Տ. Խաչվանքյան

Գլավիխի լիազոր 1043, հրատ. № 346,
պատվեր № 7, տիրաժ 6000, ինդեքս П—80

Հայկուստանի Կապույտ, Յերեվան
Այլադրույան № 27





А. МИКОЯН
ВОПРОСЫ ПИЩЕВОЙ ПРОМЫШЛЕННОСТИ
В СВЯЗИ СО СТАХАНОВСКИМ
ДВИЖЕНИЕМ

Армшартиздат, Ереван